«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՏԱՎՈՒՇԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ

Երևան – 2021

ՆԱԽԱԲԱՆ

Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ ՏՏՊՔ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվել և իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից, որոնցից մեկն ուսանող է:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթական գործընթացի իրականացման վրա:

Զեկույցը պարունակում է ՏՏՊՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 10

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 10

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 10

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 14

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 14

I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 16

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 19

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 23

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 29

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 33

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 39

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 41

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 46

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 48

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 51

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 54

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 55

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 56

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 59

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 61

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 62

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 63

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՏՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ՏՏՊՔ-ն տարածաշրջանային միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի նպատակն է «առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրմամբ՝ ավանդական, ինչպես նաև նորարարական, փորձարարական ծրագրերի իրականացման ու տարբեր կազմակերպությունների, այդ թվում ուսումնական հաստատությունների ընդգրկմամբ ստեղծված ցանցային համակարգի ձևավորման շնորհիվ դառնալ ՀՀ մասնագիտական կրթական համակարգի զարգացման գերազանցության և տարածաշրջանի բազմագործառութային կենտրոն՝ ստանձնելով կրթական բարեփոխումների առաջնորդողի, տարածողի դերը՝ ապահովելով որակյալ մասնագետների պատրաստումը աշխատաշուկայի և անձի պահանջմունքներին համապատասխան»:

Հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ ՄՈՒՀ–ը տարածաշրջանային քոլեջ է, որը գտնվում է Իջևան քաղաքում և ունի կարևոր ռազմավարական նշանակություն: Դիտարկվել է նաև այն, որ ՏՏՊՔ-ն առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց:

ՏՏՊՔ-ում հիմնականում ներդրված են պահանջված և նորարարական մասնագիտություններ: «Զբոսաշրջություն» և «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտական կրթական ծրագրերն իրականացվում են դուալ ձևաչափով: Վերջին շրջանում ներդրվել են «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» և «Գինեգործություն և հյութերի արտադրություն» մասնագիտությունները: Հիմնականում աշխատաշուկայում բարդ իրացվող մասնագիտություններն են «Նախադպրոցական կրթություն»-ը և «Ֆինանսներ»-ը, իսկ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության վերաբերյալ շահակիցների մոտ կա աշխատաշուկայում զբաղեցրած տեղի տարբեր պատկերացումներ: Մասնագիտությունները ներդնելիս բանավոր մակարդակում տեղի է ունենում աշխատաշուկայի ուսումնասիրություն, սակայն համապարփակ վերլուծություններ առկա չեն:

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Քոլեջն ունի վստահելի գործատու-գործընկերներ, որոնք աջակցում են ՏՏՊՔ-ին պրակտիկայի կազմակերպման և գործնական ժամերի իրականացման գործընթացներում, որը ՄՈՒՀ–ի ուժեղ կողմերից է:

Կառավարման համակարգում բացակայում են կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորումները, որոնք հստակորեն կապահովեն ԶՀ-ի ամբողջական իրականացումը, չեն երևում ստորաբաժանումների համագործակցության եզրերը: Որոշումների կայացման հիմքում ընկած չեն հավաստի տվյալներ, որոշումները հիմնականում կայացվում են իրավիճակից ելնելով: Կառավարման գործընթացում թույլ է արտահայտված ներքին շահակիցների մասնակցությունը:

ՏՏՊՔ-ն տարբեր ստորաբաժանումների և օղակների միջոցով ուսանողներին աջակցություն է տրամադրում ուսումնական գործընթացում առաջ եկող խնդիրների լուծման համար, սակայն ոչ բոլոր մեխանիզմներն են համակարգված, հաճախ ուսանողներն ունեն իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկման խնդիր:

ՄՈՒՀ–ում աշխատում են ինչպես երկարամյա աշխատանքային փորձ ունեցող հմուտ դասավանդողներ, այնպես էլ երիտասարդ կադրեր: Երիտասարդ դասախոսները հիմնականում տեսական դաշտից են, կա դասախոսների կատարելագործման խնդիր:

Հետազոտության ոլորտում ՏՏՊՔ-ն չունի հատուկ նպատակադրումներ, թույլ է հետազոտություն և ուսումնառություն կապը: Որոշ մոդուլների հանձնարարականներ պարունակում են ինքնուրույն մտածողությունը զարգացնող տարրեր, կան դասախոսներ, ովքեր մասնագիտական ձեռնարկների հեղինակներ են, մասնակցել են ՊԿՉ-ների վերանայման գործընթացներին, սակայն նմանօրինակ դրական փորձերի խրախուսման մեխանիզմները բացակայում են, որը ՏՏՊՔ-ի թույլ կողմերից է:

Քոլեջում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, սակայն մեծ մասը չի օգտագործվում կրթական միջավայրում, որը ՄՈՒՀ-ի հիմնական խնդիրն է: Ռեսուրսային բազան համալրելիս ոչ միշտ է հաշվի առնվել տարածաշրջանի և շահակիցների կարիքները: Դեռևս անկատար են ներքին շահակիցների կարիքների վերհանումը և դրան համապատասխան ռեսուրսային բազայի համալրումը: Քոլեջի հիմնական թույլ կողմերից է եղած ռեսուրսային բազայի անարդյունավետ օգտագործումը:

Արտաքին հաշվետվողականությունը հիմնականում պայմանավորված է ՀՀ գերատեսչություններին հաշվետվությունների ներկայացմամբ: Գործում են ներքին հաշվետվողականության մի շարք մեխանիզմներ, սակայն անհրաժեշտություն կա մեխանիզմների բարելավման՝ ձևավորելով վերլուծական հաշվետվողականության համակարգ: Հասարակական պատասխանատվության ոլորտում կան որոշակի մեխանիզմներ, սակայն կա անհրաժեշտություն նորերը ստեղծելու և եղածները զարգացնելու:

ՏՏՊՔ-ն համագործակցում է տարածաշրջանային մի շարք կազմակերպությունների հետ, որոնք աջակցում են ստեղծելու բարենպաստ կրթական միջավայր: ՄՈՒՀ-ը համագործակցում է նաև մի շարք տեղական և միջազգային, բարեգործական կազմակերպությունների հետ

ՈԱ գործընթացները դեռևս ՄՈՒՀ-ում բացակայում են: Հիմնական հաստիքային կազմը համալրված չէ ՈՆԱ աշխատակցով: ՄՈՒՀ-ը փորձել է ստեղծել ՈԱ գործընթացների փաստաթղթային հիմնավորում, սակայն դրա իրականացումը վտանգված է, քանի որ այդ ուղղությամբ աշխատանքներ դեռևս չեն տարվում:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Ղեկավար կազմի կողմից ՄՈՒՀ–ի զարգացման ուղղությունների հստակ պատկերացումը,
2. Գործատու-քոլեջ ակտիվ համագործակցությանն ուղղված քայլերը,
3. Դուալ և դուալի ձևաչափով իրականացվող կրթական ծրագրերի ստեղծման և վերանայման գործընթացներում գործատուների ակտիվ ներգրավվածությունը,
4. Արտաբյուջեի ձևավորմանն ուղղված նպատակների հստակեցումը,
5. Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության վարած քաղաքականությունը՝ ապահովելով որակյալ կադրերի ներգրավումը,
6. Դիմորդների հավաքագրման մեխանիզմները՝ ուղղված դիմորդների կայուն հոսքի ապահովմանը,
7. Հարուստ ռեսուրսային բազայի առկայությունը,
8. Ուսումնական գործընթացը կազմակերպելու համար ապահով և անվտանգ միջավայրը,
9. Տեղական և միջազգային գործընկեր կազմակերպություններ գտնելու մեխանիզմները՝ ապահովելով ռեսուրսային բազայի հարստացումը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Ռազմավարական պլանավորման մեջ ներքին և արտաքին շահակիցների պասիվ մասնակցությունը,
2. Կառավարչական որոշումների հիմքում համակարգային վերլուծությունների պակասը, ինչպես նաև գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի բացակայությունը,
3. Գործատուների պահանջներին համապատասխան գործնական հմտություններով օժտված շրջանավարտների պակասը,
4. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների փոխկապակցվածության մեխանիզմների անկատարությունը,
5. ՄԿԾ-ների մշտադիտարկման քաղաքականության բացակայությունը,
6. Դասախոսների կատարելագործմանն ուղղված քայլերի անլիարժեքությունը,
7. Գործատու դասախոսների սակավությունը,
8. Հետազոտության ոլորտում հավակնությունների և խրախուսման մոտեցումների բացակայությունը,
9. Հետազոտություն և ուսումնառություն կապի անկատարությունը,
10. Այլ ՄԿՈ հաստատությունների հետ ոչ ակտիվ համագործակցությունը,
11. ՈՆԱ համակարգի բացակայությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Մշակել և ներդնել ներքին և արտաքին շահակիցների կարիքները բացահայտող մեխանիզմներ։
2. Իրականացնել շահակիցների կարիքների, տարածաշրջանի և ՄՈՒՀ–ի առանձնահատկությունների համակարգային վերլուծություն և վերանայել քոլեջի առաքելությունը, նպատակները և խնդիրները՝ ապահովելով հստակություն և չափելիություն։
3. Մշակել ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացման պլան–ժամանակացույց՝ հստակեցնելով պատասխանատուներին և սահմանելով արդյունավետության գնահատման ցուցիչներ։
4. Մշակել և ներդնել գործիքակազմ ԶՀ-ի պարբերաբար գնահատման և բարելավման համար՝ այն մշտապես դարձնելով արդիական և կիրառելի։

Կառավարումն ու վարչարարությունը

5. Ապահովել ԶՀ-ից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ նպատակների պլանավորումը և իրականացումը։
6. Մշակել և ներդնել բոլոր ստորաբաժանումների և պաշտոնների համար նկարագրեր՝ ապահովելով բոլորի հստակ գործառույթները։
7. Ապահովել ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության հավաստի տվյալների վերլուծություն, որը կդառնա որոշումների կայացման հիմքը։
8. Ապահովել ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական իրականացումը ՄՈՒՀ-ի գործունեության բոլոր մակարդակներում։

Մասնագիտության կրթական ծրագրերը

9. Իրականացնել աշխատաշուկայի խորը և համակարգային վերլուծություն՝ հաշվի առնելով տարածաշրջանի և ՄՈՒՀ–ի առանձնահատկությունները։ Նոր մասնագիտություններ ներդնելիս կամ գործողները վերանայելիս հիմնվել այդ վերլուծությունների վրա։
10. Մշակել և ներդնել Կրթական ծրագրերի վերանայման և մշտադիտարկման քաղաքականություն և ընթացակարգեր։
11. Բազմազանեցնել մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները, որոնք միտված կլինեն ոչ միայն գիտելիքի, այլ նաև՝ կարողությունների և հմտությունների ստուգմանը։
12. Ակտիվ ջանքեր ներդնել ավելի շատ կրթական ծրագրեր դուալ դարձնելու համար։

Ուսանողները

13. Ակտիվացնել ՈՒԽ անդամների գործունեությունը՝ հստակեցնելով գործառույթները և իրենց կողմից կատարվող աշխատանքները։

14. Ակտիվացնել Կարիերայի կենտրոնի աշխատանքները՝ ոչ ֆորմալ դասընթացների թեմաները համապատասխանեցնելով ըստ մասնագիտությունների, հաճախակի դարձնել գործատուների և հաջողության հասած շրջանավարտների հետ հանդիպումները։
15. Ապահովել ուսանողների ներգրավվածությունը տարբեր հետազոտական նախագծերում։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

16. Ներդնել գործատու-դասավանդողների ներգրավվման մեխանիզմներ, ինչպես նաև համագործակցել գործատուների հետ ՊԴ կազմի մասնագիտական որակների բարձրացման ծրագրեր իրականացնելու ուղղությամբ։
17. Ապահովել դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումներ՝ իրականացնելով ծրագրերի հայթայթման աշխատանքներ։
18. Մշակել և ներդնել դասախոսական կազմի գնահատման և խրախուսման հստակ մեխանիզմներ։

Հետազոտությունը և զարգացումը

19. Մշակել, ներդնել և իրականացնել դասախոսների հետազոտական աշխատանքները խրախուսող քաղաքականություն։
20. Ներդնել հետազոտության ոլորտում լավագույն փորձի տարածման մեխանիզմներ։
21. Մշակել և ներդնել ուսանողներին տրվող հետազոտահենք հանձնարարականներ, որոնք կնպաստեն ուսանողների վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը, կբխեն ՄԿԾ վերջնարդյունքներից և ՈԱՇ-ի պահանջներից։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

22. Մշակել և ներդնել շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմներ՝ ապահովելով կարիքներից բխող ռեսուրսների ձեռքբերումը։
23. Ֆինանսական պլանավորման հիմքում դնել ռազմավարական առաջնահերթությունները։
24. Մշակել մեխանիզմներ ունեցած կրթական միջավայրին համապատասխան ռեսուրսների ամբողջական և արդյունավետ կիրառման համար։

Հասարակական պատասխանատվությունը

25. Ապահովել ներքին հաշվետվողականության միասնական համակարգ՝ ապահովելով վերլուծականությունը և կապը ԶՀ-ի հետ։
26. Ներդնել տեղեկատվության տարածման և հետադարձ կապի մեխանիզմներ՝ ակտիվացնելով ֆեյսբուքյան էջը, կայքի ներդրման աշխատանքները՝ ապահովելով ՄՈՒՀ-ի գործընթացների թափանցիկությունը։
27. Ներդնել և իրակացնել կարճաժամկետ դասընթացներ տարբեր թիրախային խմբերի համար։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

28. Ապահովել արտաքին կապերի հաստատման ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ համակարգելով և փաստաթղթավորելով գործընկերների հետ իրավահարաբերությունները։
29. Ընդլայնել ՀՀ քոլեջների հետ համագործակցությունը՝ մասնավորապես նման կրթական ծրագրեր ունեցողների՝ ապահովելով դասախոսական անձնակազմի փորձի փոխանակումը։
30. Բարելավել դասախոսական անձնակազմի և ուսանողական համակազմի օտար լեզվի (ռուսերեն, անգլերեն) իմացության մակարդակը։

Որակի ներքին ապահովման համակարգը

31. Համալրել որակի ներքին ապահովման պատասխանատուի հաստիքը փորձառու և ճկուն աշխատակցով։
32. Ապահովել նորանշանակ ՈՆԱ պատասխանատուի համար համապատասխան վերապատրաստումներ՝ որակի ապահովման գործընթացները թիրախային պլանավորելու և իրականացնելու նպատակով։
33. Մշակել և ներդնել տվյալների հավաքագրման, վերլուծության և տարածման հուսալի մեխաիզմներ ՝ ներգրավելով ներքին և արտաքին շահակիցներին։
34. Իրականացնել համակարգային վերլուծություն հասկանալու ՈՆԱ ստորաբաժանման առաջնահերթությունները և ընթացիկ աշխատանքները պլանավորել ըստ վեր հանված առաջնահերթությունների։

_____

Քրիստինե Հակոբյան, փորձագիտական խմբի ղեկավար

29.12.2021

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից.

1. **Քրիստինե Հակոբյան՝** ՀՀ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կադրերի բաժնի ղեկավար, Զբոսաշրջության դասախոս,
2. **Ալվինա Ներսիսյան՝** ԼՂՀ Մեսրոպ Մաշտոց Համալսարանի ներքին որակի ապահովման կենտրոնի ղեկավար, Օտար լեզուների ամբիոնի դասախոս,
3. **Լիաննա Գրիգորյան՝** ՀՀ Արթիկի պետական քոլեջի տնտեսագիտական և ավտոմասնագիտական առարկաների ամբիոնի դասախոս,
4. **Հենրիկ Պողոսյան՝** ՀՀ Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային բաժնի մասնագետ Անահիտ Տերտերյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ՏՏՊՔ–ն 12.02. 2021թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո ՏՏՊՔ–ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Քոլեջի ինքնավերլուծությունն իրականացրել է ՏՏՊՔ–ի տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Ինքնավերլուծություն

Քանի որ ՏՏՊՔ-ն առաջին անգամ էր անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացով, և գործընթացն իրականացնելը քոլեջի համար բարդ էր, այդ պատճառով ՈԱԱԿ–ը որոշակի աշխատանքներ է իրականացրել ուսումնական հաստատության հետ՝ նախապատրաստելով նրան ինքնավերլուծության ներկայացմանը և հավատարմագրման

գործընթացին: Փետրվար ամսին ՏՏՊՔ-ն 2 շաբաթվա ընթացքում իրականացրել է SWOT վերլուծություն հավատարմագրման 10 չափանիշներին համապատասխան: SWOT վերլուծության ներկայացումից հետո քոլեջն առաջադրել է 2 աշխատակից, որոնց հետ միասին ՈԱԱԿ աշխատակիցները 1 ամիս դիտարկել են քոլեջի կողմից ներկայացված SWOT վերլուծությունը, դուրս են բերել հիմնական խնդիրները: ՈԱԱԿ համակարգողը այդ ընթացքում քոլեջի աշխատակիցներին ուղղորդվել է, թե SWOT վերլուծությունն ինչպես պետք է կատարել, և ինքնավերլուծության ընթացքում քոլեջը հատկապես ինչին պետք է ուշադրություն դարձնի չափանիշների շրջանակներում: SWOT վերլուծության դիտարկումից հետո քոլեջի աշխատակիցները՝ որպես փորձագետներ, ՈԱԱԿ աշխատակիցների հետ միասին 2021 թվականի մարտի 15-ին իրականացրել են առցանց այց ՏՏՊՔ-ում:

ՏՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 08.06.2021թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության 11 աշխատակիցների՝ դասախոսների, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները և ներքին շահակիցները՝ ուսանողները, չեն մասնակցել: Յուրաքանչյուր չափանիշ վերլուծվել է 1 աշխատակցի կողմից՝ հաշվի առնելով աշխատակցի աշխատանքային ուղղվածությունը և չափանիշի պահանջները:

Ինքնավերլուծական զեկույցը հիմնականում եղել է նկարագրական և ընդհանրական, որը երբեմն հնարավորություն չի տվել փորձագետներին նախնական գնահատման ժամանակ պատկերացում կազմել քոլեջում տիրող իրական վիճակի մասին:

Նախապատրաստական փուլ

ՏՏՊՔ-ի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես

նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակրգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: ՈԱԱԿ-ը քոլեջի փորձագիտական այցերի ընթացքում որպես նորույթ ավելացրել է երկու զուգահեռ հանդիպումներ, զուգահեռ հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր մասնագիտական ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միացել է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել առանձին երկու մասնագիտական հանդիպումներ ունենալ քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված կատարման չափանիշների ձեռքբերմանը:

Նախնական այց

Հաշվի առնելով ՏՏՊՔ-ի հեռավորությունը մայրաքաղաքից՝ քոլեջի նախնական այցը կատարվել է առցանց փորձագիտական այցից երկու շաբաթ առաջ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ համակարգողը, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը և փորձագիտական խմբի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2021թ. հոկտեմբերի 24-27-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցով նախատեսված այցից մեկ օր առաջ (23.11.2021թ.) փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողն ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել քոլեջի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափորոշիչների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի տնօրենի հետ հանդիպումներով[3]: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների (դասախոսական կազմ, ուսանողներ, շրջանավարտներ) մասնակիցներն ընտրվել են

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, բացառությամբ բաց հանդիպման: Փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների[4] և պրակտիկայի վայրերի դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ դեկտեմբերի 2-ին: Նախնական զեկույցը ներկայացվել է Քոլեջին 03 դեկտեմբերի 2021թ.-ին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ՏՏՊՔ-ն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 24.12.2022թ.: ՈԱԱԿ-ը քոլեջի դիտարկումները տրամադրել է փորձագիտական խմբին: 28.12.2022թ. ՈԱԱԿ-ը կազմակերպել է քոլեջի և փորձագիտական խմբի առցանց հանդիպում, որի ժամանակ քննարկվել է քոլեջի դիտարկումները: Հաշվի առնելով քոլեջի դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 29.12.2022թ.:

Անահիտ Տերտերյան, փորձագիտական խմբի համակարգող

29.12.2021թ.

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ԴԻՏԱՐԿՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջը հիմնադրվել է 1967թ.՝ որպես Երևանի թեթև արդյունաբերության տեխնիկումի մասնաճյուղ: Մասնաճյուղի հիմքի վրա ՀԽՍՀ մինիստրների սովետի 1968թ. հուլիսի 25-ի որոշմամբ ստեղծվել է Իջևանի տեխնիկումը, որը գործել է մինչև 1972թ.: 1972թ. տեխնիկումը վերանվանվել է Իջևանի ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկումի: ՀՀ ԿԳՆ 1996թ. հոկտեմբերի 10-ի գրությամբ ուսումնական հաստատությունը կոչվել է ակադեմիկոս Զ. Գ. Ղազումյանի անվամբ: ՀՀ ԿԳՆ 1999թ. դեկտեմբերի 3-ի միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մասին որոշմամբ տեխնիկումը վերանվանվել է «Իջևանի պետական քոլեջ» ՊՈԱԿ: 2001թ. ՀՀ կառավարության որոշմամբ և ՀՀ ԿԳ նախարարի հրամանով քոլեջին է միացել Իջևանի թիվ 69 արհեստագործական տեխնիկական ուսումնարանը և Երևանի հիդրոմելիորատիվ հենակետային պետական քոլեջի Իջևանի մասնաճյուղը: 2011թ.-ին ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ–ի:

Իր հիմնադրման սկզբից մինչ օրս հաստատությունը տվել է շուրջ 7000 շրջանավարտ: ՏՏՊՔ-ն իրականացնում է նախնական մասնագիտական և միջին մասնագիտական 8 կրթական ծրագիր, որից 2-ը՝ դուալ ծրագրով: Ուսուցումը քոլեջում իրակացվում է մոդուլային համակարգով: Ներկայումս ՄՈՒՀ–ում սովորում է 304 ուսանող, որից 50–ը՝ նախնական մասնագիտական, իսկ 254–ը՝ միջին մասնագիտական կրթական ծրագրերում:

Կրթություն. ՏՏՊՔ–ն իրականացնում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հետևյալ կրթական ծրագրերը՝ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն», «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական նորոգում և սպասարկում», «Նախադպրոցական կրթություն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», «Գինեգործություն և հյութերի արտադրություն»: Այս մասնագիտությունների դասավանդման համար քոլեջում հիմնականում առկա է համապատասխան դասախոսական կազմ:

ՏՏՊՔ–ում բարեփոխումները մեկնարկել են 2004թ., երբ ՄՈՒՀ–ը դարձավ Եվրոպական Միության ՏԱՍԻՍ –ի ծրագրով աջակցություն ստացող չորս պիլոտային քոլեջներից մեկը: Այդ ժամանակահատվածում առաջին անգամ քոլեջում փորձակվել է մոդուլային ուսուցման փորձը:

Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպի ձևավորում. Հետազոտական աշխատանքների իրականցմանը որոշակիորեն նպաստում են իրականացվող պրակտիկաները, որոնք նպաստում են ուսանողների ստեղծագործական և վերլուծական կարողությունների զարգացմանը:

Արտաքին կապեր. Գործատուների հետ կապերի ակտիվացումը ՏՏՊՔ–ի ռազմավարական հիմնախնդիրներից է: ՏՏՊՔ–ի նպատակներից է նաև նորարարական, փորձարարական ծրագրերի իրականացումը տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

ՏՏՊՔ–ն ունի մի շարք պայմանագրեր տեղի գործատու–կազմակերպությունների և միջազգային բարեգործական կազմակերպությունների հետ, որոնց շնորհիվ կարողանում է ապահովել ուսանողների համար ապահով և բարենպաստ կրթական միջավայր։

Որակի ապահովում. Որակի ապահովման գործընթացները ՄՈՒՀ–ում ձևավորման փուլում են։ Քոլեջի կողմից փորձ է արվել մշակել «Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը, սակայն այն դեռևս իր կիրառությունը չի գտել, քանի որ ՏՏՊՔ–ում դեռևս Որակի ներքին ապահովման պատասխանատուի հաստիքը համալրված չէ։

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր. `ինքնավերլուծություն, ռազմավարական հայեցակարգ և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: ՀՀ ԿԳՄՄՆ ՏՏՊՔ-ի առաքելությունը նկարագրված է 2018-2023 թթ. ՄՈՒՀ-ի «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգ»-ում (այսուհետ՝ ԶՀ) և կանոնադրությունում, որի համաձայն քոլեջի հիմնական առաքելությունն է՝ գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:

Քոլեջի որդեգրած հիմնարար արժեքներն են՝ մատչելիությունը, ուսանողի համակողմանի զարգացումը, մանկավարժադասախոսական որակյալ կազմը, ուսանողի մասնակցությունը և միջանձնային հարաբերությունները:

ՏՏՊՔ-ն իր գործունեությունը ծավալում է Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 3-րդ, 4-րդ և 5-րդ մակարդակին համապատասխան՝ նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն (3-րդ մակարդակը վերաբերում է հանրակրթական բլոկին): ՏՏՊՔ-ի ՄԿԾ-ները համապատասխանում են ՈԱՇ-ին:

Իր ԶՀ-ում նպատակներին հասնելու համար քոլեջը ներկայացնում է ռազմավարական 11 խնդիր, որոնց մի մասի հետ կապված գործուն քայլեր է կատարում, օրինակ՝ եվրոպական երկրների դուալ կրթության համակարգի առաջավոր փորձի ներդրման ուղղությամբ իրականացնում է 2 դուալ փորձնական կրթական ծրագիր՝ «Զբոսաշրջություն» և «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտություններով: 1 նախնական մասնագիտական կրթական ծրագիր՝ «Գինեգործություն և հյութերի արտադրություն», նույնպես իրականացվում է դուալի ձևաչափով և տրամաբանությամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պլանավորում է ավելի զարգացնել «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», «Գինեգործություն և հյութերի արտադրություն» մասնագիտությունները և նպատակ ունի լիցենզավորել «Յուղի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա» գյուղատնտեսական մասնագիտությունը: Շահակիցների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ աշխատաշուկայի համակարգված վերլուծություններ չեն իրականացվում, այն տեղի է ունենում ՄՈՒՀ– գործատու երկխոսության շրջանակներում:

Պետք է նաև փաստել, որ ԶՀ-ով կան սահմանված խնդիրներ, որոնք չափելի չեն և չեն ենթադրում կոնկրետ գործողություններ, օրինակ՝ «ապահովել ազգի զարգացումը. նոր մակարդակի բերող ժամանակակից անհատի և քաղաքացու ձևավորումը, հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը, սոցիալական համախմբվածությունը, որոնք կբերեն կայունության և ժողովրդավարության» և այլն:

ՏՏՊՔ-ի հայեցակարգում կան նաև սահմանված խնդիրներ, որոնց իրականացման համար շարունակական ակտիվ, գործուն քայլեր չեն ձեռնարկվում, օրինակ՝ համայնքին տարբեր ծառայությունների մատուցում, հասարակության առանձին խմբերին կամ տարածաշրջանային հաստատություններին մեթոդական աջակցության տրամադրում: ՄՈՒՀ այցից փորձագիտական խումբը տեղեկացավ, որ «Ֆերտի» բարեգործական կենտրոնի և համայնքապետարանի աջակցությամբ և քոլեջի ուսանողների ջանքերով 3 մանկապարտեզների և 1 նախակրթարանի տանիքներում տեղադրվել են ջրատաքացուցիչներ, աշխատանքների իրականացմանը մասնակցել են նաև «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության ուսանողները, որի համար ստացել են որոշակի վարձատրություն: Սա եզակի հաջողված փորձ է:

ԶՀ-ը չունի պլան-ժամանակացույց, սահմանված չեն կոնկրետ քայլերի հաջորդականություն, պատասխանատուներ և գնահատման առանցքային ցուցիչներ, որը կբերի նախանշված խնդիրների իրականացմանը:

ՏՏՊՔ-ն, ըստ ինքնավերլուծության, արտաքին շահակից է համարում ՀՀ Կառավարությանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, գործատուներին, մարզային իշխանությանը, շրջանավարտներին և ծնողներին, իսկ ներքին շահակից՝ ուսանողներին, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմին:

ԶՀ-ն հավանության է արժանացել քոլեջի Կառավարման խորհրդի կողմից: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Հայեցակարգը մշակվել է միանձնյա, գործընթացում ներքին և արտաքին շահակիցները անմիջականորեն ներգրավված չեն եղել: Այցից նաև պարզ դարձավ, որ ԶՀ-ն մշակելիս հաշվի են առնվել Տավուշի մարզի Ռազմավարական ծրագիրը և ՏՏՊՔ-գործատու երկխոսության արդյունքները:

Որոշ ՄԿԾ–ների պարագայում գործատուների կարիքները բացահայտվում են դուալ և դուալի ձևաչափով իրականացվող կրթական ծրագրերում՝ «Զբոսաշրջություն», «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում» և «Գինեգործություն և հյութերի արտադրություն»: Առկա են նաև կրթական ծրագրեր՝ «Նախադպրոցական կրթություն» և «Ֆինանսներ», որոնք ապահովում են հեշտ անցում դեպի բուհ, քանի որ այս մասնագիտություններով շրջանավարտները հիմնականում աշխատանք չեն գտնում՝ գործատուն նախընտրում է բարձրագույն կրթություն ունեցողներին:

ԶՀ-ում միջնաժամկետ պլանավորում առկա չէ, իսկ կարճաժամկետ պլանավորման հիմքում ընկած են ստորաբաժանումների, ցիկլային հանձնաժողովի նախագահների տարեկան պլանները, սակայն դրանք չեն բխում Հայեցակարգից, այլ ամենօրյա ընթացիկ աշխատանքների արդյունք են:

ՏՏՊՔ-ում առկա չէ ԶՀ–ի վերանայման և մշտադիտարկման քաղաքականություն, այն ընթացիկ չի վերանայվում և բարելավվում:

Ռազմավարական նպատակների գնահատման հիմքում ընկած են ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները, որոնք հիմնականում

նկարագական են, ԶՀ-ում սահմանված չեն նպատակների իրականացման ցուցիչներ, որը թույլ կտա գնահատել քոլեջում իրականացվող գործընթացների արդյունավետությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՏՏՊՔ-ն ունի միջին մասնագիտական ուսումնական հաստատության համար օրենքով սահմանված գործունեության շրջանակները մատնանշող ռազմավարություն և նպատակներ, քոլեջի իրականացրած գործունեությունը ընդհանուր առմամբ համապատասխանում է առաքելությանը, սակայն կան սահմանված ընդհանրական նպատակներ, որոնք ընդհանուր առմամբ չեն արտահայտում քոլեջի առանձնահատկությունները (օրինակ՝ գիտելիքի ստեղծումը):

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը պատկերացնում է իր հետագա զարգացման ուղղությունները կրթական ծրագրերի ներդրման միջոցով՝ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», «Գինեգործություն և հյութերի արտադրություն», սակայն նոր մասնագիտությունների ներդրման արդյունավետությունը կարող է վտանգվել, քանի որ ՏՏՊՔ-ն չի իրականացրել աշխատաշուկայի հստակ և համակարգային վերլուծություն և չի հաշվարկել հնարավոր բոլոր ռիսկերը և վտանգները:

Խրախուսելի է, որ ՏՏՊՔ-ն իր առջև ռազմավարական խնդիր է դնում համայնքի կարիքներին համապատասխան ծառայությունների մատուցումը, և այդ ուղղությամբ ունի դրական փորձ, որն ընդգծում է ՄՈՒՀ–ի հասարակական պատասխանատվության ստանձնումը: Նման ծրագրերի հայթայթումը և շարունակական իրականացումը կարող է նպաստել համայնք-քոլեջ կապի ամրապնդմանը, հավելյալ եկատմուտների ձեռքբերմանը, միևնույն ժամանակ ուսանողների մոտ պրակտիկ հմտությունների ձևավորմանը:

Չնայած նրան, որ ԶՀ-ի մշակման գործընթացում ներքին և արտաքին շահակիցները անմիջականորեն մասնակցություն չեն ունեցել, սակայն նպատակների և խնդիրների ձևակերպման հիմքում ընկած են եղել տարածաշրջանի զարգացման ուղղությունները, ինչպես նաև որոշակիորեն գործատուների կարիքները, որի արդյունքում սահմանված նպատակները և խնդիրները հիմնականում իրատեսական են և արտահայտում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում առկա է երկարաժամկետ պլանավորում՝ 5 տարի ժամկետով, սակայն բացակայում են ԶՀ-ից բխող գործընթացների վերահսկման միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումները և արդյունավետության որակական և քանակական գնահատման ցուցիչները, որը թույլ կտար գնահատելու ԶՀ–ի ամբողջական իրականացումը:

ԶՀ-ի վերանայման և բարելավման մեխանիզմների առկայությունը թույլ կտա պարբերաբար հստակեցնել սահմանված նպատակները և խնդիրները՝ դարձնելով Հայեցակարգը ճկուն և գործող փաստաթուղթ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՏՏՊՔ-ի գործունեությունը ընդհանուր առմամբ համապատասխանում է միջին մասնագիտական ոլորտին, համապատասխանում է ՈԱՇ-ին, առաքելությունը, նպատակները և խնդիրները մասամբ արտահայտում են ներքին և արտաքին

շահակիցների կարիքները, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ՏՏՊՔ-ն բավարարում է ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՏՏՊՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: ՏՏՊՔ–ն պետական ոչ առևտրային կազմակերպություն է և ունի օրենսդրությամբ նախատեսված կառավարման մարմիններ՝ Կառավարման խորհուրդ (ԿԽ) և տնօրեն: ԿԽ-ի ձևավորման ընթացակարգը և գործառույթները սահմանված են ՏՏՊՔ Կանոնադրությամբ: ԿԽ կազմում ընդգրկված են գործատուներ, միասնական սոցիալական ծառայության, հիմնադրի և լիազոր մարմնի ներկայացուցիչներ, դասախոսներ և ուսանողներ, արհմիության ներկայացուցիչ:

ՄՈՒՀ–ում գործում են նաև տնօրինական, մանկավարժական և ուսումնամեթոդական մասնագիտական խորհուրդներ, որոնց իրավասությունները և գործունեությունը կարգավորվում է «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրինական, մանկավարժական և ուսումնամեթոդական մասնագիտական խորհուրդների իրավասությունների և գործունեության կարգով:

ՏՏՊՔ-ի ԶՀ-ի մեջ հստակ սահմանված է քոլեջի կառուցվածքը, որտեղ արտացոլվում են քոլեջի ստորաբաժանումների միջև եղած փոխհարաբերությունները և կապերը: ՏՏՊՔ–ի ստորաբաժանումների աշխատանքային պլաններում ամբողջությամբ չի երևում ստորաբաժանումների փոխկապակցվածությունը և համագործակցությունը, սակայն ոչ փաստաթղթավորված ձևով համագործակցությունն առկա է:

ՄՈՒՀ–ի տնօրենն ունի 2 տեղակալ՝ ուսումնական աշխատանքների գծով և կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով, ովքեր համակարգում և վերահսկում են քոլեջում կատարվող աշխատանքները: Քոլեջն ունի Կարիերայի կենտրոն (1 աշխատակից), Պրակտիկայի բաժին (2 աշխատակից, բաժնի վարիչ և դուալի հրահանգիչ), ներքին որակի ապահովման ենթակառուցվածք (դեռևս աշխատակցով համալրված չէ): Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Որակի ներքին ապահովման պատասխանատուի հաստիքը քոլեջը նախատեսում է համալրել 2022թ.-ի հունվարին:

Ստորաբաժանումների աշխատանքային գործընթացներն իրականացվում են պաշտոնի նկարագրերին կամ կանոնակարգերին համապատասխան: Պետք է նաև փաստել, որ այդ գործառույթները չեն սահմանվել ԶՀ-ի նպատակների և խնդիրների հիման վրա:

ՄՈՒՀ–ն ունի 4 ցիկլային հանձնաժողով՝ Ավտոշահագործման, տնտեսագիտական, բնագիտական, հումանիտար:

ՄՈՒՀ–ն ունի երկարաժամկետ պլանավորում ԶՀ–ի տեսքով, որտեղ սահմանված են ՏՏՊՔ–ի նպատակները, բացակայում նպատակների իրականացման արդյունավետության գնահատման որակական և քանակական ցուցիչները:

Փոխտնօրենները, ցիկլային հանձնաժողովի նախագահները և Կարիերայի կենտրոնի ղեկավարն ունեն աշխատանքային պլաններ: Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում և շահակիցների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների պլանավորումներն իրականացվում են ավանդական ձևով՝ ըստ ամենամյա իրականացվող աշխատանքների: Դա է փաստում նաև այն, որ պլաններն ամեն տարվա համար կրկնվում են և ոչ միշտ են, որ բխում են քոլեջի ռազմավարական նպատակներից, իսկ հաշվետվությունները ներկայացվում են ըստ առկա պլանավորումների:

Դասախոսները ներգրավված են կառավարման օղակներում՝ ԿԽ-ում, մանկավարժական խորհրդում, տնօրինական խորհրդում, ուսումնամեթոդական խորհրդում: Ուսանողները ներգրավված են Ուսանողական խորհրդում (ՈՒԽ) և ԿԽ-ում: Ըստ «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ԿԽ-ի աշխատակարգի՝ դասախոսական համակազմից երկու դասախոս մանկավարժական խորհրդի որոշմամբ առաջադրվում է ԿԽ-ի անդամ, իսկ ուսանողական համակազմից երեք ուսանող՝ ՈՒԽ-ի կողմից: Փաստաթղթերի ուումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջում առկա են դասախոսների և ուսանողների ԿԽ–ում ընդգրկվելու Մանկավարաժական խորհրդի և ՈՒԽ–ի արձանագրություններ, սակայն շահակիցների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ վերջիններս այդքան էլ տեղեկացված չեն իրենց առաջադրման ընթացակարգից:[5] Պետք է նաև փաստել, որ ուսանողական և դասախոսական կազմի ներկայացուցիչները հարցեր չեն բարձրացնում ԿԽ–ում, ինչպես նաև դասախոսների ու ուսանողների կարիքների վերհանման համար չունեն մեխանիզմներ:

Կարիքների վերհանման համար քոլեջում առկա չեն մշտադիտարկման և կարիքների վերհանման ընթացակարգեր, այն իրականացվում է միայն բանավոր ձևով:

Պետք է նաև փաստել՝ կառավարման տարբեր մակարդակներում որոշումների կայացման հիմքում միշտ չէ, որ ընկած են հավաստի տվյալների վերլուծությունը, օրինակ՝ կան լիցենզավորված կրթական ծրագրեր, որոնք ներդնելիս հաշվի չեն առնվել աշխատաշուկայի պահանջները, օր.՝ «Իրավագիտություն» կրթական ծրագիրը, մի քանի տարի է՝ այս մասնագիտությամբ ընդունելություն տեղի չի ունենում:

Շահակիցների հետ հանդիպումները փաստեցին, որ ԿԽ-ի ոչ բոլոր որոշումներն են հասնելի ներքին շահակիցներին, տեղեկատվության տարածման մեխանիզմներն անկատար են:

[5] Նախադասությունը վերաձևակերպվել է քոլեջի դիտարկումների արդյունքում:

ՏՏՊՔ-ն իր գործունեության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից՝ ըստ ուսանողների թվաքանակի: Քոլեջի բյուջեի մեծ մասը բաժին է ընկնում աշխատանքի վարձատրությանը: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ քոլեջը երբեմն իրականացնում է նաև կարճաժամկետ ծրագրեր, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում կատարել որոշակի խնայողություններ: ՄՈՒՀ-ն այս տարվանից հնարավորություն ունի իրականացնելու որոշակի խնայողություններ՝ շնորհիվ արևային էներգակիրների տեղադրման, սակայն խնայված միջոցների օգտագործման պլանավորում չի իրականացվել, քանի որ պարզ չէ հաջորդ տարվա համար քոլեջին տրվող ֆինանսավորման չափը:

Հաստիքացուցակի բոլոր պարտադիր հաստիքները համալրված են: Քոլեջն ունի մի շարք մասնագետների կարիք, որոնք նախատեսված չեն քոլեջին տրամադրվող հաստիքներով, սակայն արդյունավետ գործունեություն ծավալելու համար դրանք հրատապ են, օր՝ վարպետներ և կարճաժակետ ծրագրերի իրականացման համար մասնագետներ, որի արդյունքում ամբողջովին չի օգտագործվում քոլեջի նյութատեխնիկական բազան:

ՏՏՊՔ-ում իրականացվող գործընթացները հիմնականում պլանավորման և իրականացման փուլում են, ՄՈՒՀ-ում գրեթե բացակայում են մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները, որը հանգեցնում է նրան, որ բարելավումները տեղի են ունենում իրավիճակային և ոչ հստակ վերլուծությունների հիման վրա: Դա է փաստում նաև այն, որ քոլեջը ուշ է արձագանքում իր առջև դրված մարտահրավերներին:

ՏՏՊՔ-ն իր կրթական ծրագրերի վերաբերյալ հավաքագրում է որոշակի քանակական տվյալներ, ինչպիսիք են՝ Կարիերայի ստորաբաժանման հավաքագրված տվյալները շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ: Այս տեղեկատվությունը փոխանցվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, սակայն այսպիսի տվյալները չեն հրապարակվում:

ՄՈՒՀ-ը որպես իր գործունեության մասին տեղեկատվության տրամադրման հարթակ օգտագործում է քոլեջի ֆեյսբուքյան էջը, սակայն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները սակավ են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն ունի հստակ սահմանված կառուցվածք, սակայն մտահոգիչ է այն, որ ստորաբաժանումների համագործակցությունը թույլ է արտահայտված և մշակված գործառույթները հիմնված չեն ԶՀ-ի նպատատակների և խնդիրների վրա, որի արդյունքում կարող է վտանգվել ԶՀ նպատակների ամբողջական իրականացումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՏՏՊՔ-ի Հայեցակարգի մեջ նշված կառուցվածքը, նրա մեջ ներկայացված ստորաբաժանումները և ենթակառուցվածքները համալրված են համապատասխան հաստիքներով, սակայն մտահոգիչ է, որ որակի ներքին ապահովման հաստիքը համալրված չէ, որը հանգեցրել է նրան, որ որակի ապահովման, տվյալների հավաքագրման և վերլուծման գործընթացներն ամբողջովին ու համակարգային ձևով տեղի չեն ունենում:

Քոլեջն ունի ռազմավարական ծրագիր, որում առկա են նպատակներ և խնդիրներ, սակայն վերջինս չի վերածվել ռազմավարական երկարաժամկետ պլանի: Ստորաբաժանումների և ենթակառուցվածքների պլանավորումները կազմվում են հիմնվելով միայն նախկին փորձի և ընթացիկ աշխատանքների վրա, և բացակայում է նախորդ ժամանակահատվածի հստակ վերլուծությունը, ուստի և չեն երաշխավորում ռազմավարական ծրագրի իրականացումը:

Այն փաստը, որ որոշումները միշտ չէ, որ հասանելի են լինում ներքին և արտաքին շահակիցներին, վկայում է այն մասին, որ կառավարման ուղղահայաց կապը արդյունավետ չէ, քանի որ հիերարխիական փոխհարաբերությունների մեջ գտնվող ստորաբաժանումները լիարժեք չեն համագործակցում: Օրինակ՝ Կարիերայի կենտրոնի տրամադրած տվյալները ցույց են տալիս տեղեկատվություն, որ շրջանավարտները չեն կարողանում իրացվել իրենց մասնագիտություններով տարբեր պատճառներով՝ որոնցից է օտար լեզվի իմացության խնդիրը, սակայն տվյալ խնդիրը լուծելու նպատակով քոլեջում ոչ մի որոշում չի կայացվել:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի խորհուրդներում կանոնակարգված ընտրությունը, սակայն ԿԽ անդամների պատասխանատվության և նախաձեռնողականության բացակայությունը կարող է խոչընդոտել ներքին շահակիցների խնդիրների և առաջարկների վերհանմանը և քննարկմանը Կառավարման խորհրդում[6]:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջը փորձում է ստեղծել լրացուցիչ եկամուտների աղբյուրներ, սակայն ոչ լիարժեք կառավարման արդյունքում՝ այն է՝ ոչ թիրախավորված քայլեր մասնագետների ներգրավման ուղղությամբ, քոլեջի ղեկավարությունը դժվարանում է իրականացնել կարճաժամկետ և միջնաժամկետ հստակ և համակարգված պլանավորման գործընթացներ, ուստի քոլեջի լաբորատորիաները և մնացյալ ռեսուրսները ոչ լիարժեք են օգտագործվում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՏՏՊՔ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունը համակարգված չեն, քաղաքականության և ընթացակարգերի վարչարարությունը չի իրականացվում որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում), քոլեջը չունի հավաստի տվյալների հավաքագրման համակարգված մեխանիզմներ և քաղաքականություն, ըստ այդմ, որոշումների կայացումը տեղի չի ունենում հավաստի, վերլուծված տվյալների վրա, բացակայում են միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումներն ըստ ԶՀ-ի, փորձագիտական խումբը գտնում է, որ ՏՏՊՔ-ն չի բավարարում ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՏՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

[6] Նախադասությունը վերաձևակերպվել է քոլեջի դիտարկումների արդյունքում:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: ՏՏՊՔ-ն կրթություն է իրականացնում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերով: Քոլեջում առկա են արհեստագործական հիմքով 3՝ «Խոհարարություն» (հիմնական կրթության հիմքով), «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» (հիմնական կրթության հիմքով), «Գինեգործություն և հյութերի արտադրություն» (հիմնական կրթության հիմքով) և միջին մասնագիտական 6՝ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» (հիմնական կրթության հիմքով), «Նախադպրոցական կրթություն» (հիմնական և միջնակարգ կրթության հիմքով), «Զբոսաշրջություն» (հիմնական և միջնակարգ կրթության հիմքով), «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» (հիմնական և միջնակարգ կրթության հիմքով), «Ֆինանսներ» (հիմնական և միջնակարգ կրթության հիմքով) և «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում» (հիմնական և միջնակարգ կրթության հիմքով) մասնագիտությունները: ՄԿԾ-ները համապատասխանում են ՊԿՉ-երին: Նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերում սովորում է 304 ուսանող:

Քոլեջում 2 միջին մասնագիտական կրթական ծրագրեր դուալ են՝ «Զբոսաշրջություն» և «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դուալի ՄԿԾ-ները և ուսումնական պլանները վերամշակվել են քոլեջի կողմից՝ գործատուների ակտիվ ներգրավմամբ: Քոլեջն ունի հեռակա կրթություն իրականացնելու թույլտվություն «Իրավագիտություն» (միջնակարգ կրթության հիմքով) մասնագիտության գծով, սակայն վերջին տարիներին ընդունելություն չի իրականացրել:

ՏՏՊՔ–ի ներքին շահակիցների մոտ կա տարամիտում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» ՄԿԾ-ի շուրջ. շահակիցների մի մասը կարծում է, որ այն այլևս կենսական չէ, քանի որ այս մասնագիտության շրջանավարտները հիմնականում աշխատանք են գտնում ճանապարհային ոստիկանության աշխատակազմում և պահակային ծառայություններում ոչ իրենց մասնագիտությամբ, իսկ Կառավարության որոշման համաձայն՝ ճանապարհային ոստիկաններին փոխարինելու է գալու պարեկային ծառայությունը, ինչը կհանգեցնի աշխատատեղերի կրճատման: Իսկ ոմանք հիմնավորում են, որ այն արդիական է, քանի որ ուսանողները չեն գնում ավագ դպրոց, գալիս են քոլեջ ունենալու համար և՛ մասնագիտություն, և՛ բուհ գնալու հնարավորություն: «Ֆինանսներ» և «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության շրջանավարտները չեն կարողանում իրենց տեղը գտնել աշխատաշուկայում, քանի որ գործատուները և պետությունը այս ոլորտների համար նախապատվությունը տալիս են բարձրագույն կրթություն ստացած շրջանավարտներին: Դա են փաստում նաև Կարիերայի կենտրոնի տվյալները, ըստ

որոնց՝ այս մասնագիտությամբ ոչ մի ուսանող չի աշխատում, շրջանավարտները միայն հնարավորություն են ունենում լավ և գերազանց առաջադիմության պարագայում հեշտությամբ ընդունվել որևէ բուհի նույն մասնագիտության հեռակա բաժնի 2-րդ կուրս: Ուսանողների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ «Ֆինանսներ» մասնագիտության ուսումնաատադրական պրակտիկաները հիմնականում չեն կազմակերպվում, քանի որ բանկային համակարգի կանոնակարգը թույլ չի տալիս, կամ տևում են ընդամենը մեկ օր՝ պասիվ դիտման ձևով:

Դուալ կրթական ծրագրերի հաջողությունն ապահովելու համար ակտիվացվել է գործատուների հետ համագործակցությունը, և ՄԿԾ-երը մշակելիս հաշվի են առնվել գործատուի կարիքները: Մասնավորապես՝ նախկինում եղած «Զբոսաշրջություն» մասնագիտության մոդուլային ծրագրերի փաթեթում չի եղել «Արշավների կազմակերպում» մոդուլը, որը մշակվել է գործատուի առաջարկով: Փոփոխություն է եղել նաև տեսական և գործնական ժամերի բաշխման մեջ. գործնական պարապմունքներին ավելի շատ ժամեր են տրամադրվել: Ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցի ժամանակ, «Զբոսաշրջություն» մասնագիտության 2 հատուկ մասնագիտական մոդուլներից «Զբոսաշրջային ծառայությունների միջազգային կարգավորում» և «Կիրառական տնտեսագիտություն» մոդուլները դուալի ձևաչափով արդյունավետ չեն, քանի որ գործատուի մոտ չկան համապատասխան մասնագետներ, ովքեր կդասավանդեն: Ցիկլային հանձնաժողովը քննարկում է այդ մոդուլները վերանայելու և դուալի ծրագրից հանելու հարցը:

Դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ դասախոսները դասավանդման ընթացքում կիրառում են որոշ ինտերակտիվ մեթոդներ՝ երկխոսություն, խմբային, դասավանդումը սահիկաշարերով, որոնք հիմնականում միտված են համապատասխան վերջնարդյունքների ձեռքբերմանը: Քոլեջում առկա չէ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության հստակ մշակված քաղաքականություն: Ոչ միշտ է, որ ընդհանրական մոդուլների բովանդակությունը արտացոլում է մասնագիտական ուղղվածությունը, օրինակ՝ «Հաղորդակցման հմտություններ» մոդուլի բովանդակությունը ներկայացվում է ընդհանրական և չի կապվում այն մասնագիտության հետ, որի շրջանակներում դասավանդվում է:

Դասալսումների, փաստաթղթերի և հանձնարարականների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ որոշ մոդուլների շրջանակներում՝ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» ՄԿԾ-ի «Ճարտարագիտական գրաֆիկա», «Համակարգչային օպերատրություն», «Թույլտվածքներ և նստվածքներ, չափիչ գործիքներ և չափումների տեխնիկա», ուսանողներին տրվող հանձնարարականները հիմնականում ապահովում են մոդուլի կատարման չափանիշները: Կան նաև մոդուլներ, օրինակ՝ «Նյութագիտության հիմունքներ», որի շրջանակներում մշակվել են թեստային առաջադրանքներ, որոնք հիմնականում բավարար չեն մետաղների, համաձուլվածքների նախապատրաստվածքների պրոֆիլները ճանաչելու, մակնիշավորման սկզբունքները գործնականում օգտագործելու կարողություններ ձեռք բերելու համար:

«Զբոսաշրջություն» մասնագիտության «Հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների տեսակները և դասակարգումը» մոդուլի շրջանակներում տրված գործնական առաջադրանքները հիմնականում ծածկում են մոդուլի սահմանած ուսումնառության արդյունքները և դրանց կատարարման չափանիշները:

Դասալսումների արդյունքում պարզվեց, որ մի շարք դեպքերում գործնական դասերը տեսական նյութի վերարտադրությունն են, իսկ մոդուլի արդյունքի վերջում տրվող թեստային առաջադրանքները չեն ստուգում կարողություն և հմտություն, այլ՝ միայն գիտելիք: Որոշ դասախոսների համար թելադրությունը դեռևս դասավանդման հիմնական մեթոդ է: Ուսանողներին երբեմն տրամադրվում են գործնական հանձնարարություններ, որոնք կատարելու համար ուսանողները դեռևս չունեն համապատասխան տեսական գիտելիքների բազա, և հանձնարարականը կատարում են ոչ թե արդեն ձեռք բերված գիտելիքների և կարողությունների շնորհիվ, այլ դասախոսի տրամադրած նմուշի հիման վրա, օրինակ՝ երթուղի կազմելու համար ուսանողները չունեն քարտեզագրում կատարելու, ծախսերը ճիշտ հաշվարկելու հմտություններ, սակայն հանձնարարականը կատարում են դասախոսի կողմից տրված նմանատիպ օրինակով:

Դասալսումների արդյունքում նաև պարզ դարձավ, որ այն մասնագիտություններում, որտեղ օտար լեզուն մասնագիտական է, որոշ դեպքերում դասի վարման մեթոդաբանությունը ճիշտ ընտրված չէ, օրինակ՝ անգլերենի, ֆրանսերենի դասավանդումը իրականացվում է հայերենով: Սա հագեցնում է նրան, որ ուսանողներն ունենում են օտար լեզվի իմացության խնդիր, ինչը փաստեցին նաև գործատուները: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ նաև, որ ուսանողները ստիպված են փնտրել օտար լեզվի յուրացման այլընտրանքային ձևեր, իսկ գործատուները նշեցին, որ «Զբոսաշրջություն» մասնագիտությամբ սովորողներն ունեն նաև սպասարկման ոլորտի գիտելիքների և հաճախորդների հետ հաղորդակցման հմտությունների պակաս:

Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ոչ միշտ է դասախոսի կողմից տրված տեսական գիտելիքը համադրելի գործատուի պահանջներին և կիրառելի գործնական ոլորտում, օրինակ՝ գործատուն պնդում է, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության «Զբոսաշրջային փաթեթի ձևավորում» մոդուլի շրջանակներում քոլեջում գործնական ուսուցման ժամանակ մշակված տուր-փաթեթները մասամբ են կիրառելի գործնականում, և ուսանողները գործատուի մոտ գործնական պարապմունքների ժամանակ ստեղծում են նորերը՝ պրակտիկ մասնագետի անմիջական վերահսկողությամբ:

Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսումնական և նախաավարտական պրակտիկաների հաշվետվությունները չեն պարունակում վերլուծական տարրեր, ուսանողները դասախոսների և գործատուների կողմից հիմնականում չեն ստանում վերլուծություններ պարունակող առաջադրանքներ, ուսանողները և գործատուները չունեն համատեղ հետազոտական աշխատանքներ:

ՏՏՊՔ–ում գնահատումն իրականացվում է 10 բալանոց սանդղակով: Դուալ կրթական ծրագրերի և պրակտիկաների ընթացքում ուսանողների կարողությունները գնահատում է նաև

գործատուն, և վերջնական գնահատականը ձևավորվում է տեսականի և գործնականի արդյունքում:

Դուալ ՄԿԾ-երի համար մշակվել են օրագրեր, որոնցում ներկայացված է 3 մակարդակ՝ գիտելիք, կարողություն, հմտություն: Կարողությունը և հմտությունը գնահատվում է 10 բալանոց համակարգով, իսկ գիտելիքը «ունի» կամ «չունի»-ով: Դուալի օրագիրը կազմվում է յուրաքանչյուր ուսանողի համար՝ դառնալով առանձին պորտֆոլիո, քանի որ այնտեղ նշվում է ուսանողի աշխատանքային փորձառությունը և հստակորեն երևում են մասնագիտական կոմպետենցիաները: Օրագրում գնահատումներն իրականացնում են քոլեջի և գործատուի մասնագետները: Դուալի օրագրի ձևաչափը կիրառվում է և՛ «Զբոսաշրջություն» և՛ «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտությունների համար: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ի տարբերություն «Զբոսաշրջություն» մասնագիտության օրագրերի՝ «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտության օրագրերում գործատուների կողմից լրացված էին գիտելիքների, կարողությունների և հմտությունների բաղադրիչները, ստորագրված և հաստատված էին:

Քոլեջում բոլոր մասնագիտությունների համար ամփոփիչ ատեստավորումը իրականացվում է քննությամբ, ավարտական հարցաշարերը կազմված են հատուկ և ընդհանուր մասնագիտական մոդուլներից, որը ենթադրում է արդեն իսկ անցած մոդուլների ուսումնառության նյութերի կրկնություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախկինում եղել է ավարտական աշխատանքների պաշտպանություն, որը ներկայումս կիրառելի չէ, քանի որ ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների համար հաղթահարելի չի եղել: Փորձագիտական այցի ընթացքում դասախոսական կազմն էլ փաստեց, որ նախկին մեթոդն առավել արդյունավետ է եղել: Ռեսուրսների ուսումնասիրության ընթացքում արխիվային փաստաթղթերում նախկին դիպլոմային նախագծերն ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ այդ աշխատանքներն առավել արդյունավետ են եղել, քանի որ ուսանողի մոտ ձևավորել են հետազոտական, վերլուծական և համակարգային մտածողություն:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ Ուսումնամեթոդական խորհրդի 2021թ.–ի 3–րդ նիստում որոշում է կայացվել «Գինեգործություն և հյութերի արտադրություն» մասնագիտության ամփոփիչ ատեստավորումն անցկացնել դիպլոմային նախագծով, սակայն որոշման հետագիծը չի երևում, քանի որ այս տարի այդ մասնագիտությամբ ընդունելություն չի եղել:

Ուսումնասիրվող մասնագիտությունների բոլոր մոդուլային ծրագրերում բացակայում են ծրագրային մանրամասները, հստակեցված չեն գնահատման միջոցները, դուալ մոդուլային ծրագրերում բացակայում են գործատուի մոտ պահանջվող ռեսուրսները: Ըստ ՏՏՊՔ-ի ԿԽ-ի կանոնակարգի 18-րդ կետի՝ խորհուրդը քննարկում է ուսումնական պլանները և մոդուլային/առարկայական ծրագրերի նախագծերը: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք չեն հաստատվել Խորհրդի կողմից:

ՏՏՊՔ-ի ՄԿԾ-ները բովանդակային առումով համահունչ են հայաստանյան ՄՈՒՀ-երի նմանատիպ ՄԿԾ-ներին, քանի որ բոլորի հիմքում ընկած է նույն ՊԿՉ-ն:

Ուսումնառողների շարժունություն ոչ մի մակարդակում չի գրանցվում, սակայն անհրաժեշտության պարագայում հայաստանյան մակարդակում հնարավոր է, քանի որ ծրագրերն ամբողջությամբ համադրելի են: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ դուալ կրթական ծրագրի ներդրման ժամանակ անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրել նմանատիպ այլ կրթական ծրագրեր, ՄՈՒՀ–ն ուսումնասիրել է Երևանի հայ-հունական զբոսաշրջության պետական քոլեջի և Երևանի հումանիտար պետական քոլեջի ուսումնական պլանները, մոդուլային ծրագրերը, ինչի արդյունքում իրականացվել է ծրագրային բենչմարքինգ ոչ ֆորմալ ձևով: Բենչմարքինգի արդյունքում որոշվել է՝ ինչ համամասնությամբ բաժանել ժամերը և ինչ փոփոխություններ կատարել ուսումնական պլանում: Դասախոսների շրջանում նույնպես բացակայում է շարժունությունը:

ՄԿԾ–ները հիմնականում մշտադիտարկվում են ցիկլային հանձնաժողովների կողմից և սահմանափակվում են տեսական և գործնական ժամերի բաշխման փոփոխություններով: Վերջին տարիներին ՄԿԾ–ները հիմնականում չեն վերանայվել, բովանդակային առումով վերանայումներ տեղի են ունենում դուալով իրականացվող կրթական ծրագրերում: Ավելի լայն մշտադիտարկման և բարելավման համար քոլեջը սպասում է ՄԿՈՒԶԱԿ–ի վերանայումներին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն ունի ինչպես նախկինում իրականացվող, այնպես էլ նոր ներդրված ժամանակակից մասնագիտություններ, ինչպիսիք են «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», «Գինեգործություն և հյութերի արտադրություն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Զբոսաշրջություն» մասնագիտությունները: Բացի այդ, հատկանշական է, որ ժամանակակից կրթական մոտեցումների ներդրման արդյունքում ակտիվացել է քոլեջ-գործատու կապը, որի արդյունքում մշակվել են երկու մասնագիտության դուալ կրթական ծրագրեր: Մտահոգիչ է այն փաստը, որ ՏՏՊՔ-ն ունի լիցենզավորված մասնագիտություններ, օրինակ՝ միջնակարգ կրթության հիմքով «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Զբոսաշրջություն» և «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտություններ, որոնց գծով 2020 թվականին ընդունելություն չի իրականացվել, նույն տարում՝ միջնակարգ կրթության հիմքով «Ֆինանսներ» և «Նախադպրոցական կրթություն» մասնագիտություններով ունեցել են մեկական դիմորդ, իսկ հիմնական կրթության հիմքով, նախնական մասնագիտական կրթական ծրագրերով «Խոհարարական գործ» մասնագիտությամբ դիմորդ չեն ունեցել: Ուստի պարզ չէ մասնագիտությունների ընտրության և ներդրման արդյունավետությունը: Քոլեջը նույնպես չի վերլուծել պատճառները:

«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Ֆինանսներ» և «Նախադպրոցական կրթություն» մասնագիտությունների արդյունավետությունը հիմնավորված չէ, և պատճառներից մեկն այն է, որ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության զբաղմունքի նկարագիրը որոշակիորեն տարբերվում է քոլեջի պատկերացումից, «Ֆինանսներ» և «Նախադպրոցական կրթություն» մասնագիտությամբ շրջանավարտները չեն կարող աշխատել միջին

մասնագիտական որակավորմամբ, սակայն տարածաշրջանում միակը լինելու փաստը քոլեջի առջև պարտավորություն է դնում ապահովելու շարունակական կրթությունը: «Ֆինանսներ» մասնագիտության ուսումնաարտադրական պրակտիկաները կարող են վտանգվել, քանի որ քաղաքում գործող բանկերը ոչ միշտ են համագործակցում: Քոլեջում իրականացվող ՄԿԾ-ների տեսանկյունից աշխատաշուկայի պահանջները և շրջանավարտների կարիերայի հետագա հնարավորությունները պարզելու համար չի իրականացվում միասնական վերլուծություն:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ դուալ կրթական ծրագրերի մշակման ժամանակ հաշվի են առնվել գործատուների որոշ պահանջներ, մշակվել են նոր ՄԿԾ-ներ, ավելացվել են գործնական ժամերը, սակայն որոշ մոդուլների դասավանդման հարցում գործատուի ռեսուրսները սահմանափակ են, օրինակ՝ «Զբոսաշրջային ծառայությունների միջազգային կարգավորում» և «Կիրառական տնտեսագիտություն» մոդուլները դասավանդողը տալիս է տեսական գիտելիք, սակայն գործատուն գործնական հմտություն չի կարողանում ապահովել, ինչը կարող է վտանգել դասընթացի կատարողականի արդյունավետությունը կարողության և հմտության ձեռքբերման տեսանկյունից:

Դրական է այն, որ քոլեջը կարևորում է ինտերակտիվ որոշ մեթոդների կիրառումը ուսումնական գործընթացում, սակայն դրանց ընտրության և տեղայնացման քաղաքանություն առկա չէ, չի տարածվում դրական փորձը, երբեմն խզվում է կապը մոդուլի տեսականի և գործնականի միջև, տեսական գիտելիքները երբեմն գործածելի չեն պրակտիկայում, ուստի հմտությունների ձևավորման փոխարեն գործատուն ստիպված է լինում երբեմն տեսականի բացերը լրացնել:

Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված հանձնարարականները հիմնականում համապատասխանում են մոդուլի արդյունքի կատարման չափանիշով ամրագրված պահանջներին և նպաստում են ուսանողի ինքնուրույն և վերլուծական մտածողության ձևավորմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ դուալ կրթական ծրագրի ներդրման շնորհիվ ձևավորվել են հմտությունների և կարողությունների գնահատման միասնական մոտեցումներ, որոնց արդյունքում ստեղծվել են անհատական օրագրեր՝ ուսանողների անհատական փաթեթներ/պորտֆոլիոններ: Վերջիններիս ամբողջականացման և ճիշտ կիրառման արդյունքում գործատուն այլևս չի պահանջի աշխատանքային փորձառություն, սակայն մտահոգիչ է այն, որ ոչ միշտ է, որ դրանք ամբողջական լրացված են:

Մտահոգիչ է, որ հստակեցված չեն մոդուլի արդյունքների գնահատման միջոցները, երբեմն դրանք չեն համապատասխանում վերջնարդյունքով պահանջվող հմտությունների և կարողությունների գնահատման մոտեցումներին, ինչը վտանգում է ՏՏՊՔ-ի գնահատման համակարգի արդյունավետությունը, այսինքն՝ ստուգվում է հիմնականում գիտելիքը:

Մտահոգիչ է այն, որ ամփոփիչ ատեստավորման ժամանակ հիմնականում չի ստուգվում ուսանողների ձեռքբերած կարողությունները, քանի որ վերջիններս պետական ամփոփիչ քննություն են հանձնում բանավոր՝ հատուկ և ընդհանուր մասնագիտական մոդուլներից, ուստի կարողությունները և հմտությունները ստուգելու համար անհրաժեշտ է

ներդնել ամփոփիչ ստուգման այնպիսի ձև, որը հնարավորություն կտա չշեղվել վերջնարդյունքից և միաժամանակ պահպանել ակադեմիական ազնվությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ որոշ ՄԿԾ-ներ համադրվել են նմանատիպ ծրագրերի հետ, քայլեր են արվել բենչմարքինգի ուղղությամբ, թեկուզ բանավոր տարբերակով, որը հետագայում կնպաստի ուսանողների շարժունությանը:

Խրախուսելի է, որ ցիկլային հանձնաժողովներն իրականացնում են ընթացիկ վերանայումներ ՄԿԾ-ներում, սակայն հիմնական մշտադիտարկումները և բարեփոխումները վերաբերում են միայն դուալ կրթական ծրագրով ներդրված կամ նման ձևաչափով իրականացվող մասնագիտությունների ՄԿԾ-ներին, իսկ մնացած մասնագիտությունները այդքան խորությամբ չեն մշտադիտարկվել: Արդյունքում, ՏՏՊՔ-ում մշտադիտարկման մեխանիզմները համակարգված չեն և ինստիտուցիոնալ առումով չեն գործում բոլոր մասնագիտությունների համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՏՏՊՔ-ի ՄԿԾ-ները համահունչ են ՊԿՉ–ներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների և ակնկալվող ուսումնառության արդյունքների, նոր ներդրված ՄԿԾ–ները մշակվել են գործատուների հետ համատեղ, կարևորվում է ինտերակտիվ մեթոդների կիրառումը ուսումնական գործընթացում, կան բենչմարքինգի և կրթական ծրագրերի մշտադիտարկման որոշակի մեխանիզներ, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ՏՏՊՔ-ն բավարարում է ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՏՏՊՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: ՏՏՊՔ-ն ունի ընդունելության կարգ, որը հաստատվում է պետության կողմից, տարվա սկզբին քոլեջը հայտ է ներկայացնում նախարարությանը՝ ըստ մասնագիտությունների վճարովի և անվճար տեղերի, լիցենզիաների: Քոլեջում ընդունելությունը իրականացվում է մրցութային կարգով հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի, նախնական կամ միջին մասնագիտական, բարձրագույն կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների հիման վրա: Արդեն 2 տարի է, համաճարակով պայմանավորված, քոլեջում ընդունելությունը կազմակերպվում է առցանց՝ emis.am կայքէջի միջոցով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր տարվա ընդունելությունից առաջ քոլեջից ընտրված կազմը այցելում է դպրոցներ՝ մասնագիտական կողմնորոշում իրականացնելու համար՝ ներկայացնելով քոլեջի մասնագիտությունները և կարիերայի հնարավորությունները: Խումբը հանդիպում է ավագ և հիմնական դպրոցների 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների հետ, պատասխանում նրանց հարցերին: Երբեմն դպրոցների շրջանավարտներն իրենք են նաև այցելել քոլեջ ծանոթանալու քոլեջի ընձեռած հնարավորություններին: Առկա են նաև մասնագիտությունների ցանկը ներկայացնող թռուցիկներ:

Գործում է ՏՏՊՔ–ի ֆեյսբուքյան էջ, որտեղ հայտարարություններ են տեղադրում քոլեջում առկա մասնագիտությունների, յուրաքանչյուր մասնագիտության համար նախարարության կողմից տրվող անվճար և վճարովի տեղերի, ընդունելության կարգի, ընդունելության համար պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ:

ՄՈՒՀ-ում ուսանողների կարիքների բացահայտման առաջին կարևոր օղակը կուրսղեկն է, և ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցից, կուրսղեկների աշխատանքը արդյունավետ և ընդունելի մեխանիզմ է ուսանողների համար՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները: ՄՈՒՀ–ն ունի պրակտիկայի (դուալի ծրագրով) հրահանգիչ, ով վեր է հանում ուսանողների կրթական կարիքները պրակտիկայի միջավայրում. օրինակ՝ պրակտիկայի վայրի ընտրություն, պրակտիկայի ընթացքում առաջ եկած խնդիրների լուծում և այլն:

Փորձագիտական այցից պարզվեց, որ Կարերիայի կենտրոնի կողմից մեկ անգամ անցկացվել է փորձնական հարցում, որը նպատակ է ունեցել բացահայտելու ուսանողների՝ դասախոսից և նրա վարած դասընթացից բավարարվածության աստիճանը, սակայն հարցումների արդյունքները չեն ընդհանրացվել և վերլուծվել, ինչպես նաև չեն հասցվել շահագրգիռ կողմերին:

Ուսանողների համար լրացուցիչ խորհրդատվությունները կազմակերպվում են ըստ պահանջի: Հիմնականում խորհրդատվություն ուսանողները ստանում են մոդուլի արդյունքի վերահանձնման և ամփոփիչ ատեստավորման քննությունների նախաշեմին, դրանք կազմակերպվում են կուրսղեկների միջոցով: Բացի այդ, քոլեջն ունի հոգեբան, ով զրուցում և խորհրդատվություն է տրամադրում պատերազմից վերադարձած ուսանողներին, սակայն ստորաբաժանումներ կատարած այցից պարզ դարձավ, որ հոգեբանը երկար ժամանակ չի աշխատել իր մասնագիտությամբ և ժամանակակից հատուկ հոգեբանական մեթոդների չի տիրապետում: Ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունների արդյունավետության վերլուծություն քոլեջը չի իրականացրել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում առկա չէ վարչական անձնակազմին դիմելու կանոնակարգ և ժամանակացույց, շահակիցները փաստեցին, որ ուսանողները կարող են մոտենալ վարչական անձնակազմին ցանկացած ժամանակ, սակայն նման դեպքեր դեռևս չեն արձանագրվել, քանի որ խնդիրների պարագայում դրանք իրենց լուծումն են ստանում կուրսղեկների մակարդակում:

Քոլեջում գործում է Կարիերայի կենտրոն, որն իր ծառայությունները մատուցում է ոչ ֆորմալ դասընթացների ձևով, որոնց միջոցով ուսանողները տիրապետում են մրցունակ ինքնակենսագրական կազմելու պահանջներին, գործատուների որոնմանը, գործատուներին ներկայանալուն, աշխատանքային կայքէջերում տեղեկատվություն փնտրելուն և այլն: Ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցից, Կարիերայի կենտրոնի և պրակտիկայի (դուալի) հրահանգչի համագործակցության արդյունքում կազմակերպվել են հանդիպումներ գործատուի և հաջողության հասած շրջանավարտների հետ, սակայն դրանք հաճախակի բնույթ չեն կրում: Շրջանավարտների հետ կապը հիմնականում պահպանում են կուրսղեկները և Կարիերայի խորհրդատուն: Վերջինս պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում նախարարությանը իրենց շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ, ստեղծում է շրջանավարտների և գործատուների վերաբերյալ տեղեկատվական բազաներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաստատությունում ուսանողները հիմնականում չեն զբաղվում հետազոտական աշխատանքներով, բայց կա որոշակի դրական փորձեր այդ առումով. օրինակ՝ «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողները տուրփաթեթներ են կազմում գործատուի մոտ՝ հետազոտելով գնային քաղաքականությունը, ռեսուրսների արդյունավետությունը, PR գործիքները և այլն: «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ուսանողները ռոբոտաշինությամբ են զբաղվում քոլեջի «Արմաթ» ինժեներական լաբորատորիայում, սակայն այսպիսի դեպքերը եզակի են:

ՄՈՒՀ-ում ՈՒԽ-ն վերաձևավորվել է 2021 թ.-ի հունիս ամսին: ՈՒԽ-ի գործունեությունը կանոնակարգված է և որոշակիորեն պլանավորված, սակայն ՈՒԽ կանոնադրության մեջ հստակեցված չէ, թե ինչպես են ընտրվում ՈՒԽ անդամները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նրանց առաջադրում են կուրսղեկները: Հանդիպման ժամանակ նաև պարզվեց, որ ՈՒԽ անդամները և ուսանողները տեղեկացված չեն իրենց իրավունքներին և պարտականություններին: Վերջիններիս գործունեության շրջանակը սահմանափակվում է միջոցառումների կազմակերպմամբ և քոլեջում սանիտարահիգիենիկ իրավիճակի վերահսկողությամբ:

ՈՒԽ-ի կողմից ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներն անկատար են. դա է փաստում նաև այն, որ ուսանողների խնդիրները կառավարման օղակներում չեն բարձրաձայնվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը կատարում է գործուն քայլեր ուսանողների հավաքագրման նպատակով: Կարևորվում է նաև ֆեյսբուքյան էջի առկայությունը, որտեղ տեղադրվում է ընդունելության վերաբերյալ տեղեկատվություն, որը նպաստում է դիմորդների շարունակական ներգրվմանը: Միևնույն ժամանակ կատարվող միջոցառումների արդյունավետության գնահատումը կնպաստի խնդիրների վերհանմանը, այնուհետև դիմորդների թվի աճին:

Փորձագիտական խումբը արդյունավետ է համարում կուրսղեկների մասնակցությունը ուսանողների կարիքների վերհանման գործընթացին, քանի որ կուրսղեկների հետ հաճախակի հանդիպումների ընթացքում վեր են հանվում ուսանողների խնդիրները, և

նպաստում դրանց լուծմանը: Խրախուսելի է նաև կարիքների վերհանման նպատակով Կարիերայի պատասխանատուի կողմից իրականացված փորձնական հարցման իրականացումը, սակայն անհրաժեշտություն կա տվյալների վերլուծման և հետագայում հարցաշարի բարելավման: Խրախուսելի է նաև այն, որ Կարիերայի կենտրոնը ջանքեր է գործադրում աջակցելու ուսանողներին աշխատաշուկային ներկայանալու գործում: Դրական փորձ է այն, որ պրակտիկայի (դուալի) հրահանգչի հետ կազմակերպվում են գործատուների և հաջողության հասած շրջանավարտների հետ հանդիպումներ, որոնք կարող են նպաստել ուսանողների մոտ մոտիվացիայի բարձրացմանը և մասնագիտական կողմնորոշմանը: Փորձագիտական խմբի համար խրախուսելի է նման միջոցառումների շարունակականությունը:

Փորձագիտական խումբը նշում է, որ հետազոտական աշխատանքներով զբաղվելը, կնպաստի ուսանողների վերլուծական, ստեղծագործական մտքի զարգացմանը և պրակտիկ հմտությունների ձեռքբերմանը, նամանավանդ, որ քոլեջում տարատեսակ լաբորատորիաների առկայության շնորհիվ կա հետազոտական աշխատանքներ կատարելու համապատասխան միջավայր:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՈւԽ անդամները տիրապետեն իրենց հիմնական իրավունքներին և պարտականություններին, քանի որ այդ փաստի բացակայությունը կարող է վտանգել ուսանողների կրթական կարիքների վերհանումը և ինքնավարությունը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ուսանողներին տրվում են տարատեսակ խորհրդատվություններ, սակայն անհրաժեշտ է իրականացնել վերջիններիս արդյունավետության վերլուծությունները հասկանալու դրանց նպատակայնությունը և օգտակարությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում են դիմորդների հավաքագրման մեխանիզմներ, գործում է ընդունելության վերաբերյալ տեղեկատվության տարածման ֆեյսբուքյան էջ, կան ուսանողների կարիքների վերհանման որոշակի մեխանիզմներ, իրականացվում են կարիերային նպաստող որոշ ծառայություններ, գործում է ուսանողների իրավունքները ներկայացնող կառույց, փորձագիտական խումբը գտնում է, որ ՏՏՊՔ-ն համապատասխանում է ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՏՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4 -ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: ՏՏՊՔ-ում դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության համար 2018 թվականին մշակվել են «Դասախոսի կամ արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգ», իսկ 2020 թվականին՝ «Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընդունման և հեռացման քաղաքականությունը և ընթացակարգ» փաստաթղթերը: Ըստ «Դասախոսի կամ արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգ»-ի՝ դասախոսի ընտրության համար իրականացվում է մրցույթ, որն անցկացնում է նախապես ձևավորված հանձնաժողովը, կազմվում է հարցաշար, որում ներառված են դասախոսի դասավանդելիք մոդուլներին համապատասխան հարցեր: Մրցույթին մասնակցելու համար դասախոսի առջև դրված են պահանջներ, որոնք համապատասխանում են ՊԿՉ-երում եղած պահանջներին, այն է՝ ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում, իսկ հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

«Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընդունման և հեռացման քաղաքականությունը և ընթացակարգ»-ը փաստաթղթի համաձայն՝ ՏՏՊՔ-ում կադրերի անհրաժեշտության և հավաքագրման գործընթացը ենթադրում է մի քանի փուլ՝ կադրերի պահանջարկի որոշում, հնարավոր թեկնածուների որոնում, հայցողի համապատասխանության գնահատում: Զբաղեցրած պաշտոնին հայցողի համապատասխանությունը գնահատվում է մի քանի չափանիշներով՝ կրթության մակարդակ, որակավորում, աշխատանքային ստաժ: Տվյալ չափանիշները յուրաքանչյուր պաշտոնի համար որոշվում են մասնագետների և այլ ծառայողների պաշտոնների որակավորման պահանջների հիման վրա: Կախված հայցողի զբաղեցրած պաշտոնից՝ անցկացվում է մրցույթ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ 2019-2021 թվականներին անցկացվել է երկու մրցույթ, որոնց ժամանակ ընտրվել և աշխատանքի են անցել 4 դասախոս:

ՈՒսումնաօժանդակ անձնակազմն ընտրվում է ոչ մրցութային կարգով. այստեղ հաշվի է առնվում վերջիններիս փորձառությունը և որակավորումը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ կան մասնագետներ, ովքեր դասավանդում են այնպիսի մոդուլներ և առարկաներ, որոնք տարբերվում են իրենց որակավորումներից և հիմնական դասավանդած մոդուլներից, մասնավորապես՝ «Կաթի, կաթնամթերքի տեխնոլոգ» որակավորումն ունեցող մասնագետը դասավանդում է «Միջոցառումների կազմակերպում և սպասարկում հյուրանոցներում», «Դեկորատիվ կիրառական արվեստ» մասնագիտությունն ավարտած, նկարչի որակավորում ունեցող մասնագետը դասավանդում է «Անվտանգություն և առաջին բուժօգնություն» մոդուլը և այլ դեպքեր: Նմանօրինակ երևույթների պատճառը, ինչպես ներկայացվեց փորձագիտական այցի ընթացքում, տարածաշրջանում մասնագետների սակավությունն է և այդ ոլորտում տվյալ մասնագետների բազմամյա աշխատանքային փորձը:

ՏՏՊՔ-ի դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացված պահանջները արտացոլված են տվյալ ՄԿԾ-ներին համապատասխանող ՊԿՉ-ներում, «Դասախոսի կամ արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգ»-ում և «Դասախոսի աշխատանքային տեղի անձնագիր» փաստաթղթում, սակայն կրթական ծրագրին ներկայացվող հատուկ պահանջներ, ինչպիսիք են՝ տվյալ մասնագիտության շրջանակներում գործունեություն ծավալելու համար հստակ պրակտիկ հմտություններ, օտար լեզվի իմացություն, կոնկրետ ծրագրերի իմացություն և այլ կարողություններ դասախոսից չեն պահանջվում:

Պաշտոնի նկարագրեր առկա են վարչական և ուսումնաօժանդակ աշխատողներից պահակի, հնոցապանի, հավաքարարի, հաշվապահի, կադրերի բաժնի պետի, էլեկտրիկի, բուժքրոջ հաստիքների համար, ինչպես նաև՝ ցիկլային հանձնաժողովների նախագահների համար:

ՏՏՊՔ-ն դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար մշակել է «Քոլեջի տնօրենի, աշխատակազմի պարգևատրման, խրախուսման (այդ թվում՝ ֆինանսական շահադրդման) կամ պատասխանատվության ենթարկման և աշխատանքից ազատման» կանոնակարգ, սակայն կանոնակարգում բացակայում է դասախոսների գնահատման գործիքակազմը: Ինքնավերլուծությունում նշվում է, որ դասախոսների գնահատման մեխանիզմներից են դասալսումները, որոնք իրականացվում են ըստ ժամանակացույցի: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ առկա են հատուկ մշակված դասալսման ձևանմուշներ, դասալսումներն արձանագրվում են և ամփոփվում ցիկլային հանձնաժողովների կողմից, առկա են ամփոփիչ նիստի արձանագրություններ, սակայն այդ արձանագրություններում բացակայում են ձևանմուշում պահանջված տվյալները, այն է՝ մանկավարժական վարպետություն, օգտագործվող դասավանդման մեթոդներ, տեսականի կապը պրակտիկայի հետ, մատչելիություն և այլն: Դասալսման թերթիկների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դասալսումների արդյունքում որևէ կոնկրետ խնդիր չի բացահայտվում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասալսման արդյունքում վեր հանված խնդիրները չեն արձանագրվում, այլ դրանք քննարկվում և լուծվում են ցիկլային հանձնաժողովներում բանավոր մակարդակով:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կարիերայի կենտրոնի կողմից փորձ է կատարվել գնահատելու դասախոսական անձնակազմին՝ ուսանողների շրջանում հարցումներ իրականացնելով: Սակայն ինչպես պարզ դարձավ, հարցումների տվյալները չեն ընդհանրացվել, բացակայում են տվյալների վերլուծությունը և գնահատումը: Գնահատման արդյուքները շահագրգիռ անձանց՝ ցիկլային հանձնաժողովներին, ուսումնական մասին, չեն ներկայացվում: Սահմանված չէ հարցումների անցկացման հստակ նպատակ և իրականացման պարբերականություն:

ՏՏՊՔ-ում դասավանդողների կարիքների վերհանման ընթացակարգ առկա չէ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսների կարիքների վերհանման նպատակով տեղի են ունենում քննարկումներ ցիկլային հանձնաժողովներում, մանկավարժական խորհրդում և ուսումնամեթոդական խորհրդում, սակայն դրանք համակարգված չեն, չկա հստակ ձևաչափ, պարբերականություն, լուծված խնդիրների օրինակներ: Քոլեջում կա հաստատված փոխադարձ դասալսումների գրաֆիկ, ըստ որի՝ դասախոսները դասալսումներ են իրականացնում գործընկերների մոտ, և հիմնականում դրանք կրում են փորձի փոխանակման բնույթ, կամ ավագ դասախոսները մենթորության սկզբունքով իրականացնում են դասալսում օգնելու սկսնակներին:

Դասախոսական կազմի որոշ ներկայացուցիչներ վերապատրաստվել են «Օրգանական գյուղատնտեսություն», «Դուալ համակարգի տարրերի ներդրումը ՄԿՈ հաստատություններում», «Ողջ մնալու արվեստ», «Կյանքի հմտություններ և զբաղունակություն», «Ձեռներեցություն մոդուլի դասավանդում», «Կարողություններին միտված ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման արդյունավետության բարձրացում» և «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար» թեմաներով: Դասախոսական կազմը մասնակցում է նաև ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներին: Վերջինս մասամբ պլանային է, իրականացվում է ամեն տարի: ՄԿՈՒԶԱԿԻ–ի կողմից կազմակերպված վերապատրաստումները մեթոդական բնույթի են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերապատրաստումների մեծ մասը չի բխել դասախոսների կարիքներից, միայն ՄԿՈԻԶԱԿ-ի կողմից իրականացված վերապատրաստումներն են, որ ընդգրկել են նոր ընդունվածներին կամ հինգ տարի առաջ վերապատրաստվածներին:

Դասախոսների հետ հանդիպման ժամանակ նաև պարզվեց, որ համավարակի ժամանակ շատերը մասնակցել են առցանց հեռավար դասընթացների և ձեռք են բերել ՏՏ գործիքակազմի տիրապետման հմտություններ հեռավար դասընթացներ կազմակերպելու համար: Պետք է նաև փաստել, որ վերապատրաստումների արդյունավետությունը չի գնահատվել:

Փորձագիտական այցի ընթացքում և դասախոսական անձնակազմի հետ հանդիպումից պարզ դարձավ, որ նրանց մեծ մասը կարիք ունի մասնագիտական վերապատրաստումների: Մասնագիտական վճարովի վերապատրաստման մասնակցել է միայն հաշվապահը՝ «ՀԾ-Հաշվապահ 6 (հանրային հատված)» թեմայով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ երիտասարդ դասախոսները ավարտել են բուհը և անմիջապես աշխատանքի անցել քոլեջում և չունեն գործնական ոլորտում աշխատանքի հմտություններ, ինչը որոշակիորեն խնդիր է առաջացնում գործնական դասերի իրականացման համար: Այս խնդիրը մասամբ լուծվում է դուալ կրթական ծրագրերի շրջանակներում, երբ ուսումնական պլանով նախատեսված դասաժամերի 50 տոկոսն իրականացվում է գործատուի մոտ, և ուսանողների հետ աշխատում են գործատուի մասնագետները:

Շահակիցների հետ հանդիպումից նաև պարզ դարձավ, որ գործատուի մոտ գործնական պարապմունք իրականացնող մասնագետները քոլեջի կողմից մեթոդական աջակցություն չեն ստանում դասավանդման գործիքակազմի կիրառման վերաբերյալ: Գործատուներին միայն տրվում են գործնական պարապմունքների ծրագրերը՝ ըստ թեմաների:

Քոլեջը մշակել է «Սկսնակ դասախոսների խնամակալության (մենթորության) քաղաքականություն», որի նպատակներն են՝ հիմնված լավագույն փորձի ընդօրինակման սկզբունքի վրա ապահովել մենթորության ընդհանուր շրջանակներ, երիտասարդ մասնագետներին օգնություն ցուցաբերել՝ նրանց կողմից մասնագիտական և մանկավարժական կարողությունների ու հմտությունների ձևավորման, ձեռքբերման հարցում, զարգացնել սկսնակ դասախոսի վերլուծական, կրթության բարեփոխումների ուղղությամբ առաջարկություններ մշակելու և ներկայացնելու ունակությունները: Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ այս գործառույթներն իրականացվում են ցիկլային հանձնաժողովներում, որտեղ ըստ մասնագիտության՝ երիտասարդ կադրերը կցվում են ավելի փորձառու դասավանդողներին, վերջիններս նրանց հետ կիսվում են իրենց փորձառությամբ: Դրանց արդյունավետությունը որոշակիորեն գնահատվում է ցիկլային հանձնաժողովների և ուսումնամեթոդական խորհրդի նիստերի ընթացքում:

ՏՏՊՔ-ում աշխատում է 43 դասախոս, դասախոսներից 6-ը՝ համատեղությամբ, որոնցից մեկը՝ գործատու: Դասախոսական կազմն ունի բարձրագույն կրթություն: Բոլոր մանկավարժական հաստիքները համալրված են, կա միայն «Գինեգործություն և հյութերի արտադրություն» և «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտությունների դասավանդող մասնագետների անհրաժեշտություն. առաջին մասնագիտության գծով դասավանդող մասնագետի կենսաթոշակային տարիքը լրացել է, իսկ երկրորդ մասնագիտությամբ քոլեջը դասավանդող չի կարողանում գտնել:

Գործատու դասախոսների քանակը սահմանափակ է, ունեն 1 գործատու դասախոս: Գործատուների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ քոլեջի տնօրինության կողմից միայն մեկ գործատուի է առաջարկ եղել դասավանդելու: Գործատուները նշեցին, որ առաջարկի պարագայում իրենց զբաղվածությունը թույլ չի տալիս դասավանդել:

ՏՏՊՔ–ն կարևորում է երիտասարդ կադրերի ներգրավումը: Տարեցտարի նկատվում է երիտասարդ կադրերի աճ: Սա քոլեջը համարում է իր ուժեղ կողմերից մեկը:

ՀՀ կրթության կառավարման համակարգում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար չկա դասախոսական անձնակազմի մասնագիտական

առաջընթացի քաղաքականություն, քոլեջում ներդրված չեն տարակարգի կամ պաշտոնի առաջընթացի այլ մեխանիզմներ: ՏՏՊՔ–ն դասավանդողների խրախուսման նպատակով մշակել է «Քոլեջի տնօրենի, աշխատակազմի պարգևատրման, խրախուսման (այդ թվում՝ ֆինանսական շահադրդման) կամ պատասխանատվության ենթարկման և աշխատանքից ազատման» կանոնակարգ: Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ խրախուսումները հիմնականում տեղի են ունենում բանավոր ձևով, դասախոսներից մեկի թեկնածությունը 2021 թվականին մանկավարժի օրվա կապակցությամբ՝ որպես վաստակավոր մանկավարժ, ներկայացվել է նախարարությանը և պարգևատրվել պատվոգրով: 2020 թվականի դեկտեմբերին քոլեջն իր տնտեսած միջոցների հաշվին ֆինանսական խրախուսում է տրամադրել բոլոր դասախոսներին նույն չափով:

ՏՏՊՔ-ում հաստիքներով համալրումը կախված է ուսանողների թվաքանակից, ըստ որի՝ բոլոր հաստիքները համալրված են 2021 թվականի հաստիքացուցակով: Միայն ՈԱ գործընթացները համակարգելու համար ՏՏՊՔ-ն չունի ՈՆԱ պատասխանատու:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն իր կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ դասախոսական անձնակազմին ընտրում է մրցութային կարգով, ինչը կարող է ապահովել որակյալ կադրերի ներգրավումը: Դա են փաստում մրցութային հանձնաժողովի արձանագրությունները, որոնցում որոշակի պահանջների չհամապատասխանող դիմորդներին չեն թույլատրել մասնակցելու մրցույթին, կամ մեկից ավելի դիմորդների պարագայում առաջնայնությունը տրվել է փորձառություն ունեցող մասնագետին:

Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ կան դասախոսներ, ովքեր դասավանդում են իրենց որակավորմանը չհամապատասխանող մասնագիտական մոդուլներ, ինչը կարող է վտանգել դասընթացի արդյունավետությունը:

Չնայած այն հանգամանքին, որ ՏՏՊՔ-ն յուրաքանչյուր կրթական ծրագրի համար չի սահմանել դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հատուկ պահանջներ, ՄՈՒՀ–ն առաջնորդվում է ՊԿՉ-ի, մրցութային ընթացակարգի և «Դասախոսի աշխատանքային տեղի անձնագիր» փաստաթղթերի պահանջներով, որով քոլեջը կարողանում է ապահովել, որ ուսումնական հաստատությունում դասավանդեն համապատասխան կրթություն ունեցող մասնագետներ:

Դրական է այն, որ ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմի որոշ մասի համար մշակվել են պաշտոնի նկարագրեր, որը հնարավորություն է տալիս հստակ սահմանազատելու հաստիքների գործառույթները և խուսափելու կրկնություններից, սակայն հաստիքացուցակում կան մի շարք կարևոր հաստիքներ, օրինակ՝ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն, ուսումնական բաժնի վարիչ, դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, մեթոդիստ, պրակտիկայի(դուալի)հրահանգիչ, պրակտիկայի վարիչ և այլն, որոնց համար չկան պաշտոնի նկարագրեր:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ դասախոսական անձնակազմի գնահատման համար քոլեջը փորձում է ներդնել անանուն հարցումների մեխանիզմը, որը

դեռևս անկատար է, սակայն ճիշտ ներդրման և պարբերաբար անցկացնելու արդյունքում ուսանողներն անմիջական մասնակիցը կդառնան խնդիրների վերհանման գործընթացներին:

Մտահոգիչ է, որ դասախոսական անձնակազմի գնահատման համար իրականացվող դասալսումները գնահատման տարր չեն պարունակում, ըստ այդմ՝ դրանք նման ձևով իրականացնելիս որպես գնահատման գործիքակազմ այդքան էլ արդյունավետ չեն:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՏՏՊՔ-ի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի և այլ կառույցների կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, սակայն մինչ վերապատրաստումը չի գնահատվում դասախոսի կարիքը: Եղել են որոշ մասնագիտական մոդուլների վերապատրաստումներ, սակայն դրանց մասնակցել են քիչ թվով դասախոսներ, հատուկ մասնագիտական վերապատրաստումներ չեն եղել, ինչը խոչընդոտ է հանդիսանում դասախոսական անձնակազմի մասնագիտական որակների բարձրացման համար:

Անհանգստացնող է այն, որ հիմնական դասախոսական անձնակազմը չունի գործնական հմտություններ, սակայն դրական է, որ դուալ կրթական ծրագրերի արդյունքում նրանք հնարավորություն կունենան շփվելու ուսումնական գործընթացում ներգրավված պրակտիկ մասնագետների հետ, որի արդյունքում դասախոսները հնարավորություն կունենան ծանոթանալու գործատուների պահանջներին և ըստ այդ վերանայելու իրենց կողմից դասավանդող առարկաները:

ՏՏՊՔ-ի 43 դասախոսներից միայն մեկն է գործատու-դասավանդող, սակայն դրական է, որ վերջին տարիներին ավելացել են երիտասարդ դասավանդողները, ովքեր կարող են նորամուծությունների, նոր մեթոդների, գաղափարների հիմքը դնել քոլեջում: Մտահոգիչ է, որ ՏՏՊՔ-ն չունի գործատու-դասավանդողների ներգրավման, շահադրդման քաղաքականություն, որի արդյունքում կօգտվեն և՛ գործատուն, և՛ քոլեջը, և՛ շրջանավարտը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՏՏՊՔ-ում (ֆինանսական միջոցների առկայության դեպքում) առկա են ֆինանսական շահադրդման մեխանիզմներ, պատվոգրերի հանձնում, բանավոր խրախուսում, սակայն այս գործընթացի արդյունավետությունն ավելի կբարձրանար, եթե ՄՈՒՀ-ն ունենար դասախոսի աշխատանքի գնահատման հստակ չափանիշներ և խրախուսումը հիմնվեր հենց այդ չափանիշների վրա:

ՏՏՊՔ-ն իր հաստիքացուցակում չունի Որակի ներքին ապահովման կենտրոնի պատասխանատուի հաստիք, հասարարական հիմունքներով գործընթացների համակարգումն իրականացրել է ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը, ինչը կարող է խոչընդոտել երկու կարևոր պաշտոնների համատեղման արդյունավետությանը, ինչպես նաև առաջացնել այդ երկու պաշտոնների շահերի բախում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՏՏՊՔ-ն կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն, կայուն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, մասնագիտական գործունեության նկատմամբ որոշակիորեն հստակեցված պահանջներ, երիտասարդ կադրերի ներգրավման քաղաքականություն, մասնագիտական ներուժ, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ՏՏՊՔ-ն բավարարում է ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՏՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: ՏՏՊՔ-ն ոչ մի փաստաթղթում չի սահմանել հետազոտական ոլորտում իր հավակնությունները, ըստ այդմ՝ Հետազոտական գործունեության հետ կապված երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր առկա չեն:

Դասախոսական և ուսանողական կազմին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար բացակայում են խրախուսման մեխանիզմները:

ՏՏՊՔ–ի երկու դասախոսներ ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից հրատարակված՝ «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում», «Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կազմակերպում և ավտոմոբիլների տեխնիկական վիճակի գնահատման ցուցիչները», «Տեխնոլոգիական սարքավորումներ», «Ավտոմոբիլների նորոգման արտադրական և տեխնոլոգիական գործընթացներ» և «Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա: Խառատ» մասնագիտական ձեռնարկների հեղինակներ են: Այս ձեռնարկների ստեղծման համար ուսումնասիրվել է միջին մասնագիտական ոլորտի տեղական լավագույն փորձը և արդյունավետորեն ներդրվել քոլեջում: Սրանք քոլեջի միակ դրական փորձերն են:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի դասախոսներից 1-ը մասնակցել է ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված ՊԿՉ-ների վերանայման գործընթացներին, որն իրենից ենթադրում է ոլորտի և այլ երկրների փորձի ուսումնասիրություն:

ՄՈՒՀ–ը չունի այնպիսի քաղաքականություն, որ դասախոսի առջև դրվի նաև խնդիր ուսումնասիրելու իր մասնագիտության միջազգային փորձը և զարգացման միտումները: Միջազգային փորձի ուսումնասիրություն որպես այդպիսին չի իրականցվում, բացառությամբ մեկ-երկու դեպքերի, որոնք դասախոսների անհատական նախաձեռնություններն են: Դասալսումները փաստեցին, որ մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվում են ոչ այդքան արդիական ուսումնառության նյութեր, որոնք այսօր կիրառելի չեն, օրինակ՝ «Հաղորդակցություն» մոդուլում:

Ուսանողական կազմի համար որոշակիորեն հետազոտական գործունեություն է դիտարկվում նախաավարտական պրակտիկաների ընթացքում իրենց ոլորտի մասնագետների փորձի ուսումնասիրությունը:

ՏՏՊՔ–ում չեն իրականացվում դիպլոմային, կուրսային, անհատական և ինքնուրույն աշխատանքներ, որոնք միտված կլինեին ստեղծագործական, վերլուծական և քննադատական մտածողության զարգացմանը:

Հարկ է նաև փաստել, որ Կրթական ծրագրերի որոշ մոդուլների շրջանակներում ուսանողներին տրված հանձնարարականները միտված են հետազոտական հմտությունների զարգացմանը, օրինակ՝ դուալ կրթական ծրագրով «Զբոսաշրջություն» մասնագիտության շրջանակներում գործատուի մոտ գործնական պարապմունքների ժամանակ ուսանողները սովորում են ստեղծել արդյունավետ տուրփաթեթներ՝ ուսումնասիրելով շուկան, սպառողի պահանջները, գնային քաղաքականությունը և այլն, սակայն այսպիսի դրական փորձերը հազվադեպ են:

Փորձագիտական այցի և հանձնարարականների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողներին տրամադրած հանձնարարականները հիմնականում հետազոտահեն չեն, ուսանողները չեն ուսումնասիրում տեղական և միջազգային մասնագիտական գրականություն, մասնագիտության շրջանակներում չեն փորձում գտնել աշխատանքի արդյունավետության նոր լուծումներ: Ուսանողները և դասախոսները բավարարվում են միայն դասախոսի կողմից տրամադրված ուսումնառության նյութերով, ուսանողի առջև չկա դրված պահանջ ուսումնասիրելու նաև լրացուցիչ մասնագիտական գրականություն:

Գործատու-դասախոս համատեղ հետազոտական ծրագրերը բացակայում են, այսպիսի հնարավորությունների մասին քոլեջը դեռ չի մտածել:

Դատողություններ: ՏՏՊՔ-ն չի սահմանել հետազոտական ոլորտում իր հավակնությունները, նպատակները, որի առկայությունը կնպաստի ՏՏՊՔ-ի ուսանողների և դասախոսների կայուն ներգրավվածությունը հետազոտական և ստեղծագործական աշխատանքներում, կբարձրացնի քոլեջի գրավչությունը: Դասախոսական և ուսանողական կազմին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար բացակայում են խրախուսման մեխանիզմները, որոնք կնպաստեին վերջիններիս հետազոտական աշխատանքներով զբաղվելու հետաքրքրությանը և անհրաժեշտությանը:

Փորձագիտական խմբի համար մտահոգիչ է այն, որ քոլեջը չի կարևորում դասախոսական և ուսանողական կազմի մոտ հետազոտական հմտությունների առկայությունը և զարգացումը, դա են փաստում ուսանողներին տրված հանձնարարականների բնույթը և դասախոսական անձնակազմի պասիվությունը հետազոտության ոլորտում: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջում ուսանողների մոտ հետազոտական հմտությունների ձևավորումը, որը կնպաստի ուսանողի՝ հետագայում նաև աշխատակցի, ժամանակի մեջ ճիշտ փոփոխվելուն և նոր ելքեր գտնելուն: ՏՏՊՔ-ի երկու դասախոս մասնագիտական ուսումնական ձեռնարկների հեղինակներ են, սակայն մտահոգիչ է այն, որ այսպիսի դրական փորձերը տարածելի չեն, և քոլեջն այս գործում աջակցություն չի ցուցաբերում. այն դասախոսների անհատական նախաձեռնություններն են:

Դասախոսները չեն ուսումնասիրում իրենց ոլորտի միջազգային փորձը, նորարարությունները, ուստի կարող է վտանգվել դասավանդման,

ուսումնառության մեթոդների և ուսումնառության նյութերի արդիականությունը: Մտահոգիչ է նաև այն, որ դասախոսները և ուսանողները սահմանափակվում են միայն ուսումնառության նյութերով, որը թույլ չի տալիս ամբողջովին ձևավորվել որպես մասնագետ: Հանձնարարականների հետազոտահեն լինելը կնպաստի ուսանողի կողմից մասնագիտական ոլորտի ավելի լավ տիրապետմանը և տեղեկատվության ձեռքբերման ճիշտ աղբյուրների օգտագործմանը, բացի այդ ուսանողի մոտ կձևավորվեն ինքնուրույն աշխատելու հմտություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում գործատուների մոտ դուալ գործնական դասերի շրջանակում ուսանողների իրականացրած ինքնուրույն աշխատանքները, սակայն մտահոգիչ է, որ կարևոր շահակիցը՝ գործատուն, կարևորում է իր ապագա աշխատակցի մոտ հետազոտական հմտությունների ձևավորումը, սակայն քոլեջը չի արձագանքում և տարածելի չի դարձնում այդ դրական փորձերը դասախոսական կազմի համար:

Գործատու-դասախոս համատեղ հետազոտական ծրագրերը կարող են նպաստել գործատուի խնդիրների վերհանմանը և դասախոսների ու ուսանողների հետազոտական հմտությունների ձևավորմանը և զարգացմանը, հետագայում նաև հավելյալ ֆինանսական մուտքերի ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՏՏՊՔ-ում սահմանված չեն հետազոտական հավակնություններ, չեն խրախուսվում ստեղծագործական և վերլուծական մտածելակերպի ձևավորումը, լիարժեք փոխկապակցված չեն հետազոտական և ուսումնական գործընթացները, չի իրականացվում նաև դրական փորձի ուսումնասիրություն և տարածում, հետևաբար փորձագիտական խումբը գտնում է, որ ՏՏՊՔ-ն չի բավարարում ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՏՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: ՏՏՊՔ-ն գտնվում է Տավուշի մարզի Իջևան քաղաքում, ունի 1 մասնաշենք, զբաղեցնում է 4723.7 քառ. մ. տարածք: ՄՈՒՀ–ում կրթություն է ստանում 304 ուսանող:

ՏՏՊՔ–ն Եվրամիության կողմից միջին մասնագիտական կրթությանն ուղղված բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում, ինչպես նաև «Անուշավան և Օֆիկ Աբրահամյան կրթական հիմնադրամ»-ի կողմից ստացել է արդի կրթության պահանջներին համապատասխան հարուստ նյութատեխնիկական բազա՝ համակարգչային երկու լաբորատորիա, ինտերակտիվ լսարան, լինգաֆոնային կաբինետ, մարզագույք, առաջին

բուժօգնության լրակազմ, խոհարարական լաբորատորիա, ֆիզիկայի, մաթեմատիկայի, քիմիայի, գինեգործության լաբորատորիաներ՝ նորագույն սարքավորումներով, երաժշտական և էլեկտրոնային սարքավորումներ, վարսահարդարման կաբինետ, կարուձևի, զոդման, փականագործական և փայտամշակման արհեստանոցներ, ոսկերչության և «Արմաթ» ինժեներական լաբորատորիա՝ անհրաժեշտ կաբինետային կահույքով:

Ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի համար քոլեջն իր տարածքում ունի խաղահրապարակ: Քոլեջում մարզադահլիճին կից կա նաև մարզասրահ, որը համալրված է մարզասարքերով:

«Սեյվ դը Չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից ստացած դրամաշնորհի շրջանակներում կառուցվել է «Ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման և նորոգման» սոցիալական ձեռնարկություն, որը նաև դուալ կրթության միջավայր է հանդիսանում համապատասխան մասնագիտության ուսանողների համար: «Ֆրիներջի» ՍՊԸ ընկերության աջակցությամբ քոլեջի բակում կառուցվել է արևային ֆոտովոլտային կայան-լաբորատորիա: Քոլեջն ունի նաև ուսանողական միկրոավտոբուս, որն օգտագործվում է դուալ կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողներին մարզից դուրս տեղափոխելու համար:

ՏՏՊՔ–ն ունի նաև վերանորոգված հանրակացարանային տարածք երկու հարկով: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ ապագայում ՄՈՒՀ–ը մտադրություն ունի այդ հարկաբաժիններից մեկը կահավորել և վերածել հյուրատան: Նախատեսվում է հյուրատունն օգտագործել ոչ միայն ֆինանսական նոր հոսքերի ապահովման, այլև «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողների մասնագիտական հմտությունների զարգացման համար:

ՏՏՊՔ–ն համակարգչային սենյակներում ունի ինտերնետային կապ, որից օգտվում են և՛ ուսանողները, և՛ դասախոսները, ՄՈՒՀ–ի ունեցած համակարգչային բազայի մեծ մասն ունի հզորացման կարիք: Փորձագիտական այցի ընթացում պարզ դարձավ, որ այդ հարցում քոլեջին պատրաստ է աջակցել «Անուշավան և Օֆիկ Աբրահամյան կրթական հիմնադրամը»՝ տրամադրելով նոր և ավելի հզոր համակարգիչներ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջի լաբորատորիաների, արհեստանոցների և տեխնիկայի մի մասը լիարժեք չի շահագործվում: Քիմիայի լաբորատորիայի չշահագործման պատճառն է անհրաժեշտ նյութերի բացակայությունը, «Ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման և նորոգման» սոցիալական ձեռնարկության չշահագործումը կապված է տարածաշրջանում համապատասխան մասնագետի բացակայությամբ, ոսկերչության, փայտամշակման արհեստանոցների չշահագործումը պայմանավորված է համապատասխան դասավանդող մասնագետների և դիմորդների բացակայությամբ: Պետք է փաստել, որ ռեսուրսների մեծ մասը ուսանողների համար հանդիսանում է միայն դիդակտիկ նյութ:

Արևային ֆոտովոլտային կայանի հիմքի վրա բացված «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտությամբ դասավանդող -մասնագետներ չկան տարածաշրջանում:

ՏՏՊՔ-ի ԶՀ-ով սահմանված ռազմավարական նպատակներից է ստեղծել տեխնոլոգիական հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու համար: Ուսանողների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ ՏՏՊՔ-ի կողմից ձեռքբերված տեխնոլոգիապես հագեցած ուսումնական միջավայրը մասամբ է հասանելի ուսանողներին, քանի որ միշտ չէ, որ առկա են համապատասխան նյութեր լաբորատոր փորձեր անելու և համապատասխան մասնագետներ բարդ սարքավորումներն աշխատեցնելու համար:

Քոլեջի ֆինանսական ռեսուրսների կառավարումն իրականացվում է տարեկան կտրվածքով և բյուջեի նախահաշվի կազմման միջոցով, իսկ տարեվերջին կազմվում է տարեկան կատարողականը՝ ըստ գործող նախահաշվի: Քոլեջը ըստ հիմնադրի սահմանված չափի և հատկացումների, ֆինանսավորվում է ՀՀ բյուջեից և օրենքով չարգելվող այլ միջոցներից: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ 2020 թվականին բյուջետային մուտքերը կազմել են 99,09%, արտաբյուջետային մուտքերը՝ 0,91%, որից վճարվել է աշխատավարձ՝ 87,34%, վճարումներ պետբյուջե՝ 0,04 %, կրթաթոշակ՝ 6,86%, կատարվել են նաև տնտեսական ծախսեր (այդ թվում՝ կոմունալ ծախսեր, գրասենյակային ծախսեր, ընդհանուր և կապիտալ վերանորոգման ծախսեր)՝ 5,35 % և ծառայությունների ձեռքբերման ծախսեր՝ 0,27 %:

Քոլեջի ֆինանսական քաղաքականության կատարելագործման, բարեփոխման հիմնական նպատակն է ուսանողների թվի ավելացման միջոցով պետբյուջեից կատարվող հատկացումների ավելացումը, դրան ավելանում է նաև արտաբյուջետային միջոցները՝ վճարովի ուսուցման համակարգում սովորողների վարձավճարներից: Բացի այդ քոլեջի բակում տեղակայված արևային ֆոտովոլտային կայանը տարվա կտրվածքով և նախնական հաշվարկներով արտադրում է 360,000 դրամի էլեկտրաէներգիա, որը հնարավորություն կտա 2021 թ. տարեվերջին քոլեջին կատարել խնայողություններ և խնայված գումարը ծախսել ռազմավարական այլ նպատակների վրա: Ապագայում արտաբյուջետային միջոցների ավելացում կարող է ապահովել նաև հյուրանոցային հարկաբաժնի գործարկումը:

Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ քոլեջը կարևորում է հավելյալ ֆինանսական մուտքերի ներգրավումը, այդ նպատակով հիմնական միջոց է տեսնում կարճաժակետ դասընթացները, տենդերներին մասնակցությունը, դոնորներ գտնելը, իր ունեցած ուսումնամեթոդական և նյութատեխնիկական բազայի օգտագործումը:

Ռեսուրսների դիտարկումից և շահակիցների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի պրոյեկտորների համալրման կարիք, եղածներն անսարք են:

ՄՈՒՀ-ն ունի նաև գրադարան և գրապահոց, գրադարանային ֆոնդը ամբողջությամբ չի օգտագործվում, գրադարանավարի բացակայության պայմաններում ուսանողները չեն կարողանում օգտվել գրքերից, գրադարանում կա ժամանակակից մասնագիտական գրականության պակաս: ՄՈՒՀ-ում առկա է նաև արխիվ:

ՏՏՊՔ-ն 2021 թվականին մշակել է «Ռեսուրսների բաշխման ընթացակարգ», իսկ 2020 թվականին՝ «Ֆինանսական միջոցներին համապատասխան հաստատության գործունեության, պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականություն»

փաստաթղթերը: Ըստ ֆինանսական մշտադիտարկման քաղաքականության՝ ՏՏՊՔ-ի գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման գործընթացը պետք է երաշխավորի քոլեջի գործունեության զարգացումը, գնահատման գործընթացի կատարելագործումը և քոլեջի զարգացման կայունության ապահովումը: Ըստ «Ռեսուրսների բաշխման ընթացակարգ»-ի քոլեջի նպատակն է նվազեցնել ռեսուրսների անարդյունավետ բաշխումը և ուղղորդել դրանց կարևորագույն ռազմավարական ուղղություններով, բացի այդ փաստաթղթում առկա է իրավասությունների պատասխանատվությունների բաշխման մատրից և ընթացակարգի սխեմատիկ ներկայացում՝ մուտք, գործընթաց, ելք սկզբունքով: Փորձագիտական այցը և շահակիցների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ այս ընթացակարգը և քաղաքականությունը քոլեջի համար կիրառական չէ, քանի որ չի բխում ՄՈՒՀ–ի կարիքից:

Ընդունելությունը կազմակերպվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ-ի կողմից հատկացված լիցենզավորման տեղերի թվի, ուստի ռեսուրսների կարիքների կտրուկ ավելացումներ կամ նվազեցումներ, որպես կանոն, տեղի չեն ունենում, եթե իհարկե որևէ առկա մասնագիտությամբ ընդունելություն չի իրականացվում:

Քոլեջում փաստաթղթաշրջանառության կազմակերպումը և փաստաթղթերի կառավարումը՝ ներքին և արտաքին փաստաթղթերի շարժը, իրականացվում է գործավարության կանոններին համապատասխան: Ներքին փաստաթղթաշրջանառությունը կատարվում է թղթային տարբերակով:

2013 թվականից քոլեջում գործում է արտաքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային (Mulberry) համակարգը: Քոլեջն ունի պաշտոնական էլեկտրոնային փոստ, սակայն հետադարձ կապի մեխանիզմներն անկատար են, քանի որ արագ չեն արձագանքում: 2017 թվականին քոլեջը ձեռք է բերել հաշվապահական հաշվառման ավտոմատացված ՀԾ-7-7.2.3 հաշվապահական ծրագիրը: Ծրագիրը հնարավորություն է տվել հաշվապահական հաշվետվությունները կազմել ավտոմատ: Ծրագրի միջոցով ավելի արդյունավետ է դարձել հիմնական միջոցների և նյութական ակտիվների վերահսկման համակարգը:

Քոլեջում առկա են առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ենթակառուցվածքներ՝ պահպանության ծառայություն և առաջին հարկում գտնվող բուժկետ՝ անհրաժեշտ պարագաներով և դեղորայքով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուժկետն իրականացնում է նաև համավարակի կանխարգելիչ միջոցառումներ՝ ջերմաչափում, ախտահանում:

Անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով քոլեջում ներդրվել է ներքին հսկողության տեսահամակարգ, անվտանգության ձայնային համակարգ և հակահրդեհային անվտանգության համակարգ:

Արտակարգ իրավիճակներում ուսանողների և աշխատակիցների քաղաքացիական պաշտպանությունն իրականացնում է ՏՏՊՔ-ի քաղաքացիական պաշտպանության շտաբը. զինղեկն ի պաշտոնե շտաբի պետն է:

ՏՏՊՔ-ի տարածքը պարսպապատված է, առկա է մուտքի և բակի տեսահսկման համակարգ, մուտքը հսկվում է նաև պահակի կողմից: ՏՏՊՔ-ի շքամուտքն ունի թեքահարթակ, քոլեջի բոլոր հարկերում փակցված են արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման սխեմաներ, հակահրդեհային անվտանգության համար կան կրակմարիչներ: Քոլեջում իրականացվում է շուրջօրյա հերթապահություն, որի համար կազմված է գրաֆիկ, իսկ գիշերային ժամերին միացվում է անվտանգության համակարգը և շենքը հսկվում է գիշերային պահակի կողմից: ՄՈՒՀ–ում գործում է նաև ներքոլեջային ռադիոհանգույց:

ՏՏՊՔ-ում առկա չեն ռեսուրսներից բավարարվածության գնահատման հիմքեր, կրթական միջավայրի գնահատման հարցումներ չեն կատարվում, սակայն այցից կարելի է փաստել, որ ուսումնական գործընթացը կազմակերպելու համար քոլեջը հագեցած է նյութատեխնիկական բազայով: Ռեսուրսների դիտարկումից նաև պարզ դարձավ, որ ռեսուրսների մեծ մասը չի կիրառվում, միայն ցուցադրական նյութ է ուսանողների համար, կան լաբորատորիաներ, որոնք ստեղծման օրվանից երբևէ չեն աշխատել, օրինակ՝ ոսկերչության, քիմիայի, ավտոտեխսպասարկման, գինեգործության (վերջինում մեկ անգամ փորձել են խաղող ճզմել) և այլն: Քոլեջն ունի Smart գրատախտակ, որը ձեռքբերման օրվանից չի միացվել և չի գործածվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ընդհանուր առմամբ ՏՏՊՔ-ի ռեսուրսները ներկա պայմաններում ապահովում են կրթական ծրագրերի իրականացումը: Ողջունելի է, որ ՏՏՊՔ-ում ռեսուրսների համալրման հիմքում նաև դրամաշնորհային ծրագրերի միջոցով ձեռքբերված միջոցներն են: Դրական է այն, որ քոլեջը կարողանում է գտնել դոնոր կազմակերպություններ, ներդրողներ իրենց ռեսուրսային բազան համալրելու համար, սակայն մտահոգիչ է այն, որ շատ հաճախ ձեռք են բերում այնպիսի ռեսուրսներ, որոնք քոլեջի համար կիրառելի չեն լինում, քանի որ առկա է դիմորդների և մասնագետների խնդիր, օրինակ՝ ոսկերչության, փայտամշակման, վարսահարդարման, զոդման, ավտոտեխսպասարկման լաբորատորիաները: Սա խոսում է նաև այն մասին, որ պահանջարկ ներկայացնելիս քոլեջը կարիքների վերհանում չի իրականացնում:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջի շենքային պայմանները՝ լսարանների, լաբորատորիաների և արհեստանոցների մակերեսները բավարար են կրթական ծրագրերի լիարժեք իրականացման համար:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը ձգտում է մեծացնել իր արտաբյուջեն սեփական ռեսուրսների կիրառման արդյունքում՝ լրացուցիչ կարճաժամկետ ծրագրեր իրականացնելու, ռեսուրսային բազան օգտագործելու միջոցով, սական մտահոգիչ է այն, որ այս ուղղությամբ ակտիվ քայլեր չեն ձեռնարկվում:

Անհանգստացնող է, որ ՏՏՔՊ-ի նյութատեխնիկական ռեսուրսների զգալի մասը չի օգտագործվում կրթական միջավայրում, կան կարևոր սարքավորումներ, որոնք երբևիցե չեն ծառայել իրենց նպատակին, լավագույն դեպքում դրանք որպես դիդակտիկ միջոց ուղղակի ցուցադրվել են:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՏՏՊՔ-ում առկա է ֆինանսական ռեսուրսների բաշխման մեխանիզմ, որի հիմքում ընկած է տարեկան բյուջեի նախահաշվի

կազմումն ու բյուջեի կատարման վերահսկողությունը: Փորձագիտական խմբի համար մտահոգիչ է, որ ՏՏՊՔ-ի նախահաշվում ներկայացված է եղել վերապատրաստումների համար գումար, սակայն վերապատրաստումներ չեն իրականացվել:

Մտահոգիչ է, որ ՄՈՒՀ-ում առկա չեն ռեսուրսներից բավարարվածության գնահատման հիմքեր, կրթական միջավայրի գնահատում չի իրականցվում, որը չի բերում շահակիցների իրական կարիքների վերհանմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ արտաքին փաստաթղթաշրջանառությունը համակարգված է, վերահսկվում է տնօրենի կողմից՝ ապահովելով ՄՈՒՀ-ի անխափան գործունեությունը: Կարևոր է, որ ՏՏՊՔ-ում ապահով և անվտանգ միջավայր ապահովելու համար ստեղծված են բոլոր հարմարությունները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՏՏՊՔ-ն ՄԿԾ-ների իրականացման համար ապահովում է անհրաժեշտ պայմաններ, ջանքեր է ներդնում ռեսուրսների ձեռքբերման ուղղությամբ, ստեղծված է ապահով և անվտանգ միջավայր ուսումնական գործընթացի կազմակերպման համար, փորձագիտական խումբը գտնում է, որ ՏՏՊՔ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման, սահմանված առաքելության և նպատակների իրագործման համար և բավարարում է ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՏՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: ՏՏՊՔ–ի ԶՀ խնդիրներից է ապահովել ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկությունը և հրապարակայնությունը: ՏՏՊՔ-ում որոշակիորեն ձևավորված է ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ: Տնօրենը հաշվետվություն է ներկայացնում ԿԽ-ին, ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենները՝ տնօրենին, իսկ ստորաբաժանումներն՝ ըստ կառուցվածքային ենթակայությունների: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների հաշվետվություններն իրենցից հիմնականում ներկայացնում են կատարված աշխատանքների նկարագրություն, չկան վերլուծություններ: Քոլեջի տնօրենի ներկայացրած հաշվետվությունների մեջ բացակայում է տեղեկատվություն քոլեջի մյուս ստորաբաժանումների գործունեության մասին, հաշվետվությունը հիմնականում

ֆինանսական է: ՏՏՊՔ–ի պլանավորումները և հաշվետվությունները ոչ միշտ է, որ ամբողջապես բխում են ԶՀ–ի առաջնահերթություններից:

Ըստ ինքնավերլուծության՝ ՏՏՊՔ–ն տարվա ընթացքում, օրենքով սահմանված կարգով, հաշվետվություններ է ներկայացնում նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, Պետեկամուտների կոմիտեին, Ազգային վիճակագրական ծառայությանը և այլ պետական գերատեսչություններին: Ըստ ինքնավերլուծության՝ լիազոր մարմնին ներկայացրած հաշվետվությունները ներառում են ոչ միայն ֆինանսական ցուցանիշներ, այլ նաև ուսանողների և դասախոսական անձնակազմի շարժը, վերջիններիս որակավորման, ստաժի և վարած դասընթացի մասին տեղեկատվություն, և ընդունելության արդյունքները:

ՏՏՊՔ-ում գործունեության թափանցիկության նպատակով գործում է ֆեյսբուքյան էջ («Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» անվանումով), որտեղ հրապարակվում են հայտարարություններ՝ թափուր աշխատատեղերի և դիմորդների ընդունման ու համալրման, ինչպես նաև ընթացիկ միջոցառումների մասին: Ֆեյսբուքյան էջի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այն գրանցված է որպես ֆիզիկական անձ, որտեղ նշված չէ քոլեջի հետ կապ հաստատելու միջոցները՝ հեռախոս, էլ.փոստ և այլն: Անկատար են հետադարձ կապի մեխանիզմները: Քոլեջը պաշտոնական կայքէջ չունի, սակայն փորձագիտական այցի ընթացքում շահակիցները նշեցին, որ նպատակադրված են կայքէջի ստեղծմանը: Ֆեյսբուքյան էջի կառավարման աշխատանքներով զբաղվում է Կարիերայի պատասխանատուն, էջի ակտիվության վերաբերյալ վերլուծություններ չեն իրականացվում:

ՄՈՒՀ–ն ակտիվորեն համագործակցում է տարածաշրջանի գործատուների հետ, կապեր է հաստատում նաև տարածաշրջանի տարբեր դպրոցների հետ, որոնք նույնպես քոլեջի համար հետադարձ կապի մեխանիզմներ են: Որոշակիորեն առկա են հասարակության հետ կապի պահպանման մեխանիզմներ, սակայն դրանց արդյունավետությունը գնահատված չէ:

ՏՏՊՔ–ն գիտելիքներ է փոխանցում հասարակությանը կարճաժամկետ ծրագրերի իրականացմամբ, որոնք նախատեսված են տարբեր թիրախային խմբերի համար: ՏՏՊՔ-ն իր ԶՀ-ում նպատակ է դրել իրականացնելու կարճաժամկետ դասընթացներ, ինչպիսիք են վարսահարդարում, դիմահարդարում, մատնահարդարում, ավտոգործ, ավտոմոբիլային ներքին այրման շարժիչների տեխնիկական սպասարկում և նորոգում, կարուձև, խոհարարություն և այլն:

ՄՈՒՀ–ն իրականացրել է «Համակարգչային օպերատրություն» եռամսյա կարճաժամկետ դասընթացը, Word vision-ի հետ համատեղ՝ «Խոհարարություն» ծրագիր և այլն, որն ապահովում է քոլեջի համար հավելյալ ֆինանսական ներհոսք:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՏՏՊՔ-ում որոշակիորեն ներդրված է ներքին հաշվետվողականության համակարգ, սակայն այն ամբողջապես թույլ չի տալիս պատկերացում կազմել քոլեջի մասին, քանի որ բոլոր ստորաբաժանումների աշխատանքները միասնական տեսքով վերլուծված և ներկայացված չեն: Հատվածային հաշվետվությունները, որոնք հիմնականում նկարագրական են, թույլ չեն տալիս հասկանալ քոլեջի կատարած աշխատանքների արդյունավետությունը և կողմնորոշել հետագա քայլերը:

Ստորաբաժանումների պլանավորումն ու հաշվետվությունների ներկայացումը ըստ ԶՀ–ի իրականացնելու պարագայում ՏՏՊՔ–ն հնարավորություն կունենա հետևելու և գնահատելու իր նպատակների և խնդիրների իրագործումը, դուրս բերելու առկա լավ փորձը տարբեր ոլորտներում:

Փորձագիտական խումբը կարևորում է այն, որ ՏՏՊՔ–ն ունի ֆեյսբուքյան էջ, որի միջոցով հասարակությանը տեղեկացնում է իր մասին, սակայն այնտեղ հրապարակված տեղեկատվությունը ոչ լիարժեք է: Անհրաժեշտություն կա ակտիվացնելու ֆեյբուքյան էջը բովանդակային թարմացումներ կատարելու տեսակետից:

Փորձագիտական խումբը խրախուսում է այն, որ հետադարձ կապի պահպանման նպատակով ՄՈՒՀ–ը համագործակցում է գործատուների և տեղի դպրոցների հետ՝ տեղեկացնելով իր և իր հնարավորությունների մասին:

Ողջունելի է այն, որ ՄՈՒՀ–ը կարևորում է շահակիցներին գիտելիքի փոխանցումը և դա համարում է իր ռազմավարական նպատակներից, սակայն այս ուղղությամբ իրականացված քայլերը դեռևս պասիվ են, անհրաժեշտ է ակտիվացնել աշխատանքները, որը կհանգեցնի ՏՏՊՔ–ի դերի բարձրացման և ֆինանսական նոր հոսքերի ապահովման:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՏՏՊՔ–ն ունի ներքին և արտաքին հաշվետվողականության որոշակի ձևավորված համակարգ, հետադարձ կապի ապահովման և հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՏՏՊՔ-ն բավարարում է ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՏՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: Ըստ ՏՏՊՔ-ի ԶՀ–ի՝ սահմանվել է խնդիր ակտիվացնել գործատուների հետ կապերը՝ նրանց ներգրավելով ոչ միայն ուսումնական ծրագրերի մշակման գործընթացներում, այլև նրանց հնարավորություններն օգտագործել ավելի արդյունավետ: Այս խնդրի լուծման նպատակով ՏՏՊՔ–ն մի շարք համագործակցության պայմանագրեր է կնքել տարածաշրջանում գործող կազմակերպությունների և գործատուների հետ, օրինակ՝ «Իջևանի ԲՈՒԱՏ» ՓԲԸ-ի, «ԼԱՍՏԻՎԵՐ ԱՆԱՊԱՏ» Ա/Ձ, ՄԱԶԾ ԻԳԶԶԾ «ՏԱՎՈՒՇԻ ՏՈՒՐԻԶՄԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ», «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ» և այն: Գործատուների հետ համագործակցության արդյունքում քոլեջի ուսանողները հնարավորություն են ունենում օգտվելու գործատուի ռեսուրսային բազայից, օրինակ՝ «Գինեգործություն և հյութերի արտադրություն», «Զբոսաշրջություն» և «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտությունների գծով:

ՄՈՒՀ–ն ընդգրկված է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում իրականացվող «Դուալ համակարգի փորձարկումը ՄԿՈՒ ոլորտում» ծրագրում, որի շրջանակներում հաջողությամբ իրականացնում է 2 դուալ կրթական ծրագիր «Զբոսաշրջություն» և «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտություններով: Օգտագործելով դուալ կրթական ծրագրերի փորձը՝ ՏՏՊՔ–ն սկսել է համագործակցել Իջևանի գինու և կոնյակի գործարանի հետ «Գինեգործություն և հյութերի արտադրություն» նախնական մասնագիտական կրթական ծրագիրը իրականացնելու համար:

2008թ.–ից ՏՏՊՔ–ն ընդգրկվել է Եվրոպական Միության բյուջետային աջակցության ծրագրով նախատեսված 12 քոլեջների ցանկում: Սա հնարավորություն է տվել քոլեջին այս տարիների ընթացքում ձեռքբերելու հարուստ նյութատեխնիկական բազա (ավելի մանրամասն չափանիշ 7-ում):

Քոլեջը արտաքին համագործակցության և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքներ չունի, սակայն փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջի ղեկավարությունը, Կարիերայի կենտրոնը և Պրակտիկայի ղեկավարները ակտիվ աշխատանքներ են տանում ընդլայնելու քոլեջի արտաքին համագործակցության շրջանակները՝ հիմնվելով տարածաշրջանի հնարավորությունների վրա:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության, քոլեջի և «Անուշավան և Օֆիկ Աբրահամյաններ կրթական հիմնադրամի» համագործակցության արդյունքում քոլեջում բացվել է «Արմաթ» ինժեներական լաբորատորիան, ինչպես նաև ռոբոտաշինության, գինեգործության, ոսկերչության, ավտոտեխսպասարկման և մի շարք այլ լաբորատորիաներ և արհեստանոցներ (ավելի մանրամասն չափանիշ 7–ում): ՏՏՊՔ համագործակցում է նաև «Սեյվ դը Չիլդրեն» կազմակերպության հետ, որի շնորհիվ նույնպես ձեռք է բերել լաբորատորիա:

2020թ. քոլեջի համաֆինանսավորմամբ և «Ֆերտի» բարեգործական կենտրոն հասարակական կազմակերպության համագործակցությամբ և աջակցությամբ, «Միացիալ ազգերի զարգացման ծրագրերի» (ՄԱԶԾ), «Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի» (ԳԷՀ), «Փոքր դրամաշնորհների ծրագրի» (ՓԴԾ) ֆինանսավորմաբ իրականացվող «Ցածրածխածնային էներգիայի ուսումնական կենտրոնների հիմնում երիտասարդ մասնագետների համար» ծրագրի շրջանակներում քոլեջում ստեղծվել է «Վերականգնվող էներգիայի աղբյուրների ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաների» կենտրոն-լաբորատորիա:

ՏՏՊՔ-ն համագործակցում է նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ, համագործակցությունը հնարավորություն է ստեղծում քոլեջի շրջանավարտների համար ուսումը շարունակել

բուհում: Բացի այդ համալսարանի մասնագետները համագործակցում են քոլեջի հետ մոդուլային ծրագրերի փոխհամաձայնեցման և վերամշակման աշխատանքներում՝ տրամադրելով մեթոդական և մասնագիտական օգնություն ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Քոլեջի դասախոսական կազմի և ուսանողության փոխանակման ծրագրեր դեռևս չեն իրականացվել, չկան համատեղ իրականացված ուսումնական ծրագրեր օտարերկրյա քոլեջների հետ: Քոլեջում չեն գործում ներքին շահակիցների օտար լեզուների իմացության մակարդակը բարձրացնելու մեխանիզմներ: Օտար լեզուների իմացությունը (հիմնականում անգլերեն) սահմանափակվում է միայն օտար լեզվի դասախոսների իմացությամբ: Փորձագիտական և դասախոսների հետ հանդիպումները փաստեցին, որ դասախոսական անձնակազմն ունի օտար լեզի մակարդակի բարձրացման կարիք, հիմնականում դասախոսները տիրապետում են ռուսերենին:

Դատողություններ: ՏՏՊՔ–ն իր ռազմավարական ծրագրում կարևորում է գործատուների հետ համագործակցությունը, որը խրախուսելի է փորձագիտական խմբի կողմից արտաքին կապերի ձևավորման տեսանկյունից: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի ղեկավարությունը օգտագործում է բոլոր հնարավորությունները ամուր արտաքին կապեր ստեղծելու և համագործակցությունն ընդլայնելու համար: Դրա արդյունքն է այն, որ քոլեջը հիմնականում ռեսուրսային առումով ապահովված է: Մտահոգիչ է, որ հաստատվող համագործակցությունները հիմնված են անձնական կապերի վրա և չեն պայմանավորվում ինստիտուցիոնալ կապերով, ինչը կարող է վտանգել դրանց շարունակականությունը՝ ղեկավար կազմի փոփոխության դեպքում:

Քոլեջն ունի համագործակցության լայն հնարավորություններ և որոշ մասնագիտությունների գծով նաև առկա է դրական փորձ, որը կարելի է տարածել նաև մյուս մասնագիտությունների բարելավման համար: Փորձագիտական խումբը կարևորում է նաև այն, որ ՏՏՊՔ–ն որոշակիորեն համագործակցում է մյուս տարածաշրջանային պետական քոլեջների հետ, սակայն համագործակցության հնարավորությունները լիարժեք չեն կիրառվում:

Գովելի է նաև այն, որ ՄՈՒՀ–ը համագործակցության փորձեր է իրականացնում նաև միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ և որոշակիորեն կարևորում է միջազգայնացման գործընթացները, բացի այդ խրախուսելի է, որ նման ծրագրերի շրջանակներում իրականացվի նաև մասնագետների փորձի փոխանակման աշխատանքներ: Փորձագիտական խումբը կարևորում է համագործակցության արդյունքում ձեռքբերված պրակտիկաների անցկացման հնարավորությունները և գործատուների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացումը: Քոլեջը, շարունակելով իր ակտիվ աշխատանքները, հետագայում հնարավորություն կունենա իր շրջանավարտներին ապահովել ոչ միայն պրակտիկաներով, այլև՝ իրենց մասնագիտությամբ աշխատատեղերով:

Փորձագիտական խումբը կարևորում է դասախոսական և ուսանողական համակազմի օտար լեզվի իմացությունը, որը կնպաստի այլ երկրների մասնագետների հետ փորձի

փոխանակմանը և միջազգային ծրագրերի մասնակցությանը, վերջինս կնպաստի նաև ֆինանսական նոր միջոցների ձեռքբերմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՏՏՊՔ-ն ընդհանուր առմամբ արտաքին կապերի միջոցով խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը, ՄՈՒՀ-ում առկա է արտաքին կապերի ստեղծման և ամրապնդման դրական փորձ արտաքին կապերը նպաստում են գործատուների հետ միասնական ՄԿԾ-ների իրականացմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՏՏՊՔ-ն բավարարում է ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՏՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: ՏՏՊՔ–ում առկա է «Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը, որը հաստատվել է 20.08.2020 թ.-ին: Նշված փաստաթղթի մեջ սահմանված են այն հիմնական քայլերը, որոնք ուղղված են քոլեջում որակի ապահովման համակարգի ձևավորմանը, հստակ ներկայացված են այն բոլոր գործընթացները, որոնք պետք է նպաստեն քոլեջի որակյալ գործունեությանը, այն է՝ կրթական ծրագրերի տարեկան մշտադիտարկում և պարբերաբար վերանայում, քոլեջի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների շրջանում հարցումների անցկացում, հանդիպում-քննարկումների կազմակերպում, դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրերի իրականացում և այլն:

ՏՏՊՔ-ում բացակայում է առանձին ստորաբաժանում, որի վրա դրված լինեն հաստատության որակի ներքին ապահովման գործառույթները, թեպետ քոլեջի կառուցվածքային սխեմայի մեջ այդ ենթակառուցվածքը նշվում է, և որակի ապահովման պատասխանատուի դրույքը պահանջարկի պարագայում կարող է տրամադրվել քոլեջին: Հավատարմագրման գործընթացները համակարգելիս ՈՆԱ պատասխանատուի պարտականությունները հասարակական հիմունքներով ստանձնել է ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը: Փորձագիտական այցից ակնհայտ դարձավ, որ այդ երկու պաշտոնների գործառույթները փոխազդեցիկ են, պաշտոնների միջև կա շահերի բախում: ՄՈՒՀ–ում որակի ներքին ապահովման պատասխանատուի հաստիքի թափուր լինելու հետևանքով այս ուղղությամբ պլանավորումներ և ընթացիկ աշխատանքներ չեն իրականացվել:

Հավատարմագրման գործընթացների շրջանակներում ՄՈՒՀ-ում ստեղծվել է ինքնավերլուծություն իրականացնող խումբ, որը ձևավորել է ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը՝ որոշումը հիմնավորելով անդամների նախորդ փորձի առկայությամբ (2015թ. Քոլեջն իրականացրել է փորձնական ինքնավերլուծություն 2՝ 3-րդ և 5-րդ չափանիշների շրջանակներում): Յուրաքանչյուր չափանիշի գծով նշանակվել է մեկ պատասխանատու, որն էլ կատարել է տվյալ չափանիշի ինքնավերլուծությունը: Ինքնավերլուծության ուսումնասիրության և փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ պատասխանատուների ընտրությունը ոչ բոլոր դեպքերում է հիմնավորված, օրինակ՝ «Առաքելություն և նպատակներ», «Կառավարում և վարչարարություն» չափանիշների պատասխանատուներ են եղել անձիք, ովքեր ներգրավված չեն եղել ռազմավարական պլանավորման և կառավարման գործընթացներում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ինքնավերլուծություն իրականացնող խումբը ամբողջական, համարգային, հավաստի և վերլուծված տվյալներ չի ունեցել, խմբում ներգրավված չեն եղել նաև ուսանողներ, գործատուներ: Գործընթացներում ներգրավված չեն եղել նաև ՈԱԱԿ-ի կողմից այդ նպատակով վերապատրաստված երկու աշխատակիցները:

Նաև պարզ դարձավ, որ 2022 թ. հունվարից քոլեջը պատրաստվում է որակի պատասխանատուի առանձին հաստիք ունենալ, և տվյալ պաշտոնի համար առկա է թեկնածու:

Որակի ապահովման գործընթացներ որոշակիորեն տեղի են ունենում ցիկլային հանձնաժողովների մակարդակում՝ դասալսումների տեսքով: Կարիերայի կենտրոնի կողմից փորձ է արվել իրականացնել փորձնական հարցումներ(ավելի մանրամասն չափանիշ 2, 4, 7), սակայն դրանք դեռևս կիրառելի տվյալ չեն: Արտաքին շահակիցները՝ գործատուները և ամփոփիչ ատեստավորման քննության նախագահները, ներգրավված են որակի ապահովման որոշ մակարդակներում, այն է՝ մասնակցում են ամփոփիչ ատեստավորման գործընթացներին և կարծիք հայտնում ուսանողների պատրաստվածության և վերջնարդյունքների ձեռքբերման վերաբերյալ: Գործատուները նաև մասնակցում են ՄԿԾ-երի վերանայմանը և բարելավմանը դուալի շրջանակներում:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ փաստերի և տվյալների հավաքագրման որոշակի գործառույթներ իրականացվում են Կարիերայի կենտրոնի կողմից (տվյալներ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ), սակայն տվյալների հավաքագրման մեխանիզմները հստակեցված և պլանավորված չեն, իսկ արդյունքները վերլուծված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջը փորձում է տարբեր ստորաբաժանումների միջոցով վեր հանել որոշակի տվյալներ, առկա է որակի ապահովման կանոնակարգող փաստաթուղթ: ՄՈՒՀ-ը փորձ է արել մշակել «Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը, սակայն մտահոգիչ է, որ որակի ապահովման գործընթացները մեծամասամբ չեն կազմակերպվում և մշակված փաստաթղթի իրականացումը և դրա արդյունավետության գնահատումը տեղի չի ունենում:

Փորձագիտական խմբի համար մտահոգիչ է այն, որ Որակի ներքին ապահովման ենթակառուցվածքը համապատասխան աշխատակցով համալրված չէ, որը հանգեցնում է ՄՈՒՀ-ում որոշումների իրավիճակային ընդունմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ որակի ապահովման գործընթացներ քոլեջում որոշակիորեն գործում են, իրականացվում են դասալսումներ, գործատուները ներգրավված են դուալ ՄԿԾ-երի վերանայման և ամփոփիչ ատեստավորման գործընթացներում, սակայն տվյալների հավաքագրումը, վերլուծումը և արդյունքների տարածումը ամբողջապես տեղի չեն ունենում, որը կարող է խոչընդոտել որակի մշակույթի նախադրյալների ստեղծմանը և լավ փորձի դուրսբերմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՏՏՊՔ-ում ներդրված չէ որակի ապահովման համակարգը, բացակայում է համապատասխան մարդկային ռեսուրսը, ըստ այդմ գործընթացներ չեն իրականացվում կամ իրականացման դեպքում ամբողջական չեն, փորձագիտական խումբը գտնում է, որ ՏՏՊՔ-ն չի բավարարում ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՏՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակները	**Բավարարում է**
2. Կառավարում և վարչարարությունը	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրերը	**Բավարարում է**
4. Ուսանողները	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացումը	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսները	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվությունը	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացումը	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգը	**Չի բավարարում**

Քրիստինե Հակոբյան, փորձագիտական խմբի ղեկավար

29.12.2021

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Քրիստինե Հակոբյան՝ 2004 թվականին ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտությամբ: 2015 թվականին ավարտել է ԳԱԱ-ի «Տուրիզմի հիմունքներ», «Էթիկետ և միջմշակութային հաղորդակցություն», «Մարդկային ռեսուրսների կառավարում» 5-ամսյա հեռահար դասընթացները: 2011 թվականին մասնակցել է «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում», իսկ 2020 թվականին՝ «Զբոսաշրջություն(ըստ ճյուղերի)» մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների և մոդուլային ծրագրերի մշակման աշխատանքներին: Մի շարք մասնագիտական ձեռնարկների հեղինակն է: 2005 թվականից առ այսօր Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կադրերի բաժնի ղեկավար և տուրիզմի դասախոս է:

Ալվինա Ներսիսյան՝ 2005 թ. ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությամբ, 2013 – 2018թթ. եղել է նույն համալսարանի հայցորդ «Մանկավարժության և օտար լեզվի ուսուցման մեթոդիկա» մասնագիտությամբ: 2023թ–ին ավարտել է Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանը «Իրավագիտություն (Քրեական իրավունք և դատավարություն)» մասնագիտությամբ: ՂՀ Մեսրոպ Մաշտոց համալսարանի Օտար լեզուների ամբիոնի դասախոս և Որակի ներքին ապահովման կենտրոնի ղեկավար է: Մասնակցել է բազմաթիվ տեղական և միջազգային կոնֆերանսների, մի շարք հոդվածների հեղինակ է:

Լիաննա Գրիգորյան՝ 1997 թ. ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը «Մեքենաշինական արտադրության տեխնոլոգիա և սարքավորումներ» մասնագիտությամբ, իսկ 2020թ. ավարտել է ՀՀ Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը «Ֆիզիկա» մասնագիտությամբ: 2011թ.–ից մինչ օրս Արթիկի պետական քոլեջի դասախոս է:

Հենրիկ Պողոսյան՝ 2009–2019թթ. սովորել է Արտաշատի N1 հիմնական դպրոցում: 2019թ.-ից մինչ օրս սովորում է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ: 2020թ.-ին մասնակցել է ՈԱԱԿ-ի «ՈՒսանողության ձայն» նախագծի կողմից կազմակերպված ուսանող փորձագետի դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

18.10.2021թ.-21.10.2021թ.

N	18.10.2021թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում քելեջի փոխտնօրենների հետ	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ (10-12 հոգի)	12:20	13:00	40 րոպե
4.	Հանդիպում քոլեջի Կառավարման խորհրդի անդամների հետ	13:10	14:00	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	14:10	15:10	60 րոպե
6.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ (10-12 հոգի)	15:20	16:20	60 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ (10-12 հոգի)	16:30	17:30	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:40	19:00	100 րոպե

N	19.10.2021թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Դասալսումներ	09:30	11:30	120 րոպե
2.	Հանդիպում ամբիոնի վարիչների հետ	11:40	12:40	60 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
4.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները) (10-12 հոգի)	14:00	15:00	60 րոպե
5.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	15:10	16:10	60 րոպե
6.	Հանդիպում ՈՒսանողական խորհրդի անդամների հետ (10-12 հոգի)	16:20	17:00	40 րոպե
7.	Հանդիպում քոլեջի ստորաբաժանումների ղեկավարների հետ (Կադրերի տեսուչ, Հաշվապահ, Պրակտիկայի գծով պատասխանատու, «Դուալ» պրակտիկայի	17:10	18:10	60 րոպե

	ղեկավար, , Լաբորանտ, Կարիերայի կենտրոնի պատասխանատու, Անվտանգության գծով պատասխանատու, Գրադարանավար)			
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակհանդիպում	18:20	19:00	40 րոպե

N	20.10.2021թ.		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» և «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում կրթական ծրագրի պատասխանատու/ների և դասախոսական կազմի հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի պատասխանատու/ների և դասախոսական անձնակազմի հետ (10-12 հոգի)	10:00	11:30	90 րոպե
2.	Հանդիպում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» և «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	11:45	12:45	60 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00		60 րոպե
4.	Ռեսուրսների դիտարկում, այց ստորաբաժանումներ	14:10	15:20		80 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:30	19:00		210րոպե

N	21.10.2021թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	10:40	11:20	40 րոպե
3.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:30	12:30	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:40	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպումներ	13:50	16:00	140 րոպե
6.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ և փորձագիտական այցի ամփոփում	16:10	16:30	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N.	Փաստաթղթի անվանումը	Չափանիշ
1.	2015–20 թթ. Ռազմավարական ծրագիր	1
2.	Բոլոր ստորաբաժանումների և ամբիոնների աշխատանքային պլաններ և հաշվետվությունները/վերջին 3 տարվա համար/	2
3.	Կադրերի բաժին, հաշվապահություն, ուսումնական մաս, կարիերայի, գրադարան, բուժկետի կանոնակարգեր	2
4.	ԿԽ–ի նիստերի արձանագրություններ/վերջին 3 տարիների/	2
5.	3 ՄԿԾ–ների շրջանակներում ուսանողներին ներկայացվող հանձնարարականներ	3
6.	Ուսումնառության նյութեր	3
7.	Ամբիոնների աշխատակարգ կամ կանոնակարգ	
8.	Վերջին տարիների մոդուլային ծրագրեր ընտրված 3 ՄԿԾ–ներից	3
9.	ՈՒսումնամեթոդական խորհրդի արձանագրության օրինակ, որում հստակ երևում է կրթական որևէ ծրագրի ներդրման, մոդուլային ծրագրերի քննարկման արդյունքում կայացված որոշում	3
10.	Ցիկլային հանձնաժողովների արձանագրության օրինակ դասավանդման կամ ուսումնառության ուսանողակենտրոն մեթոդների ընտրության որոշման	3
11.	ՈՒսանողների գնահատման ընթացակարգ	3
12.	Վերանայված ՄԿԾ–ներ	3
13.	Պրակտիկաների ծրագրեր 3 ՄԿԾ–ի համար	3
14.	Դասացուցակներ	3
15.	Դասալսումների թերթիկներ	3
16.	Պրակտիկաների լրացրած օրագրեր/ ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 3-ական վերջին 3 տարիների/	3
17.	Ուսանողներին տրվող ուսումնառության նյութեր	3
18.	ՈՒԽ գործունեության պլաններ և հաշվետվություններ /վերջին 2 տարիների համար/	4
19.	Ուսանողների շրջանում իրականացվող հարցումների հարցաթերթեր+ և վերլուծություններ-	4
20.	Կուրսղեկի գործառույթներ	4
21.	Շրջանցիկ թերթիկի օրինակ	5
22.	Պաշտոնի նկարագրեր	5

23.	Դասախոսական անձնակազմի և ուսումնաօժանդակ անձնակազմի պաշտոնի նկարագրեր	5
24.	Վերապատրաստման փաթեթներ	5
25.	Դասախոսի փաթեթներ /պորտֆոլիոներ/	5
26.	Դասախոսների մրցույթների արձանագրություններ	5
27.	Մանկավարժական խորհրդի արձանագրություն	5
28.	Մեթոդական խորհրդի արձանագրություններ	5
29.	Ցիկլային հանձնաժողովների արձանագրություններ	5
30.	Դասախոսաների կողմից գրված ձեռնարկներ	6
31.	2020, 2021թթ. նախահաշիվ	7
32.	Արձանագրություն ԵՊՀ–ի մասնաճյուղի հետ համագործակցության մոդուլային ծրագրերի փոխհամաձայնեցման և վերամշակման աշխատանքների վերաբերյալ	9

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Գրադարան
2. Գրապահոց
3. Կաբինետներ (հոգեբանության, կուրսղեկերի, ռազմագիտության, արևային էներգիայի, լինգաֆոնային, զբոսաշրջության և աշխարհագրության, ոսկերչության, ավտոկաբինետ, զոդման, փականագործության)
4. Լաբորատորիաններ (քիմիայի, ֆիզիկայի, «Արմաթ», համակարգչային, խոհարարական)
5. Արհեստանոցներ (փայտամշակման, ավտոմաբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկման)
6. Համակարգչային լսարաններ
7. Բուժկետ
8. Դահլիճ
9. Մարզահրապարակ
10. Մարզագահլիճ
11. Լսարաններ
12. Ինտերակտիվ լսարան
13. Հանրակացարան
14. Արխիվ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՏՏՊՔ–Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ
2. ՈԱԱԿ–Որակի ապահովման ազգային կենտրոն
3. ԿԳՄՄՆ–Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
4. ՄԿՈՒ–Մասնագիտական կրթություն և ուսուցում
5. ԿԽ–կառավարման խորհուրդ
6. ԶՀ– Զարգացման հայեցակարգ
7. ՄՈՒՀ–Մասնագիտական ուսումնական հաստատություն
8. ՈԱՇ–Որակավորումների ազգային շրջանակ
9. ՊԿՉ–Պետական կրթական չափոշիչ
10. ՄԿՈՒԶԱԿ– Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
11. ՄԿԾ– Մասնագիտական կրթական ծրագիր
12. ՈՒՕ– Ուսումնաօժանդակ կազմ
13. ՄԱԶԾ –Միացիալ ազգերի զարգացման ծրագրերի
14. ԳԷՀ – Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի
15. ՓԴԾ–Փոքր դրամաշնորհների ծրագրի
16. ԵՊՀ– Երևանի պետական համալսարան
17. ԵՄ– Եվրոմիություն
18. ՈՆԱ–Որակի ներքին ապահովում